

ՅՈՎՍԷՓ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐՂՈՒԹԵԱՆ ԵՒ Ն. ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆԸ

ԳԼՈՒԽ Ծ.

Յովսէփ արքեպիսկոպոսը սկզբից ստանձնելով գաղթականների կառավարութեան գործն իբրև առաջնորդական պարտականութիւն, կաթողիկոսի հրաման և տէրութեան լանձնարարութիւն, լետով ժամանակի ընթացքում կամաց-կամաց կապում է նոցա հետ, մտերմանում և սիրում է նոցա: Եւ ուրիշ կերպ լինել էլ չէր կարող. նորա ձեռքով ստացուեց հրովարտակը, նորա աշխատանքով հիմնարկուեց, նորա հսկողութեամբ շինուեց քաղաքը, կառուցուեցան եկեղեցիները, վանքը, նորա խորհրդով և անձնական ջանքով հաստատուեցան Հոգեւոր դատարանը, քաղաքային դումը, կարգաւորուեցաւ Մագիստրատը և բոլոր բարեկարգութիւնների հիմքը դրուեց: Նախիջնանն իւր գիւղերով նորա սիրասուն զաւակն էր, նորա մեծ աշխատանքի արգասիքը, պտուղն էր. նա գուրգուրում գգւում էր նորան, նա իրան ուրիշ կերպ չէր կոչում, բայց թէ «նուստ Յովսէփ արքեպիսկոպոս Ռուսաց երկրի ամենայն հայոց ազգին, և հիմնադիր նորաչէն քաղաքին Նախիջնանայո: Սակայն նա գուրգուրալով, սիրելով գաղթականներին, նոյն ժամանակ կառավարում էր նոցա վերին աստիճանի ինքնիշխան կերպով. ամեն բան նորա կամքով, նորա ցանկացածի պէս պէտք է լինէր. ամեն բան նորա խորհրդով պէտք է կատարուէր: Գաղթականների ցոյց տուած ամենայնչին հակառակութիւնը անգամ վշտացնում էր նորան, նոցա ամենափոքրիկ ընդդիմութիւնը նորա կամքին գրգռում էր նորա գալուցով, բարկութիւնը:

Թէև ժողովուրդն էլ փոխադարձաբար սիրում ու պատում էր նորան, սիրով հնազանդելով նորա հրամաններին, աշխատելով հակառակ նորա կամքին ոչ մի բան չբռնել և քաղաքի

*) Տես շէտմայր 1902 № 6.

հիմնադիր և բարերար կոչելով նորան, բայց նոցա մէջ կալին-
ալնալիսները, որոնց սրբազանի ինքնիշխան կառավարու-
թիւնը շատ էլ դուր չէր գալիս: Դոքա գաղթականների աչ-
նալիսները, աղաները և նշանակութիւն ունեցող մարդիկն
էին, որոնք կամենում էին ղեր խաղալ ժողովրդի մէջ, բայց
չէին կարողանում, որովհետեւ նոցա բոլոր աղղեցութիւնն ու
նշանակութիւնը խոնարհում և ոչնչանում էր սրբազանի հզօր
կամքի, անձնիշխան բնաւորութեան և անսահման հեղինա-
կութեան առաջ: Սկզբից, լալտնի բան է, ալդ անբաւական-
ութիւնը մեծ ծաւալ չէ ունենում, անբաւականների թիւն էլ
շատ սահմանափակ է լինում, բայց լսող, ժամանակի ընթաց-
քում, աճում է դժգոհութիւնը և դորա հետ միասին աճում է
և դժգոհների թիւը և, վերջի վերջոյ, բանն աչն տեղն է
հասնում, որ բոլոր ժողովուրդն, երկու կուսակցութեան է
բաժանում: Հակառակ կուսակցութեան զուլա անցնում են
զինուորական աստիճանաւորները և նա մանաւանդ նոցա մէջ
մէկը՝ «պողպովովնիկ և կավալեր» Իվան Աբրամովիչ Աբրա-
մովը, որի անունով և կուսակցութիւնը կոչւում է «Աբրամովի»,
հակառակ միւս կուսակցութեան, որ կոչւում էր «Սրբազանի»:
Ալդ հալ զինուորական աստիճանաւորների և աղնուականների
թիւը շատ չէ եղել, ալ մի 8—9 հոգի. նոքա փոքր աստիճա-
նի տէր են եղել՝ պողպովովնիկ, պորովնիկ և պողպովովնիկ,
և առաջ են եկած եղել գաղթականների մէջ կամ նոչն իսկ
գաղթականութեան ժամանակ և կամ գաղթականութիւնից
առաջ, նոցանից մի քանիսը իւրեանց աստիճանը ստացել էին
գաղթականութեան գործին նպաստելու համար, մի քանիսն
էլ ռուսաց տէրութեան Ղաիմում Շահին-Գիրէյ խանի ժամա-
նակ ցոլց տուած ծառայութեան համար: Աբրահամեան կուսա-
կցութեան ամրապնդուելուն և հետզհետէ հզօրանալուն նպա-
ստում է աչն հանգամանքը, որ 1787 թուականից արքեպիս-
կոպոսը լաճախակի և երկար ժամանակամիջոցներով սկսում է
քաղաքից քացալալել: 1787 թուին նա գնում է ճանապարհոր-
դելու Ղոիմ և ճանապարհին ներկայանում է կալսերուհուն, որ
ալդ ժամանակ կատարում էր իւր նշանաւոր ճանապարհորդու-
թիւնը Կէպի Տաւրիկեան թերակղզին.¹⁹⁾ 1788 թուին գնում

¹⁹⁾ Յովսէփ սրբազանի դէպի Ղաիմ ալած ճանապարհոր-
դութիւնը և կալսերուհուն ներկայանալը ալսպէս է նկարագ-
րուած նորա ձեռագիր «Իաւթարում»: «Թիւն 1787. ողորմած

է Բեսսարաբիա և մնում է ախտիդ համարեն ամբողջ չորս տարի, գործածելով 88 թուականի մալիսի 5-ին սկսուած Տաճկաց պատերազմի ժամանակ տէրութեան նուաճումներին և Գրիգորիոսյան քաղաքը հիմնարկելով. 1793 թուին նա գնում է Պետերբուրգ շնորհակալութիւն մատուցանելու կալ-

թագունին ելեալ ի Սանկթպետերբուրգու և եկեալ ի քիով և ի լազովի գուբեռն ի քաղաքն Կրմէնչուկ և անտի գնաց ի Ղաիմ ընդ եմիերատորին, վասն տեսութեան տեղեացն Ղաիմու. ի դառնալն անտի ի Կրմէնչուկ, ընդ առաջ ելաք մեք ի Կրմէնչուկ մահոտսի պարոն Աստուածատուրիւն և տեսեալ մեր անդ զպալծառափալլ քնեազ Գրիգոր Ալէքսանդրովիչ Պետեմիլինն. լարգմամբ ընկալեալ զմեզ. ի լունիսի 6. մետոսան ժամուն տարաւ զմեզ առ թագունին, որ ձեռքն համարելով արժանաւորեցաք և խօսելով ընդ մեծութեան Նորին լետ գնալով Կայսերունէոյն, պալծառափալլ քնեազն պահեաց զմեզ առ ինքն զի ի միասին ի Ղաիմ գնասցուք, ըստ որում մեք չէաք տեսեալ ի միջոցի անդ զքանի խնդիրս էաք տուեալ նմա վասն հասարակութեան մերոյ՝ որ մեր տեղն, այսինքն դետինն փոքր էր, խոստացեալ էր շուրջ զքաղաքաւն և զգիւղօրէիւքն մերովք մեզ շնորհել, նաև ի Կատարինեալու եղեալ ազգն մեր ի Ղաիմ առաքել և մեր տօնաւուղն շնորհել. խոստանալը զորոյրն կատարել. Ապա ի միջոցի աստ բացեալ եղև կախն թուրքաց. ինքն ոչ ևս կարաց գնալ ի Ղաիմ, ալ մօր չորս տարեկան ռոճիկն տուեալ և վասն ապագայն առնելով ևս՝ հաստատեալ ի Ղաիմ ստանալ լամէ լամ ի լաբանցկի սումէն, ապա լւրով լատուկ լանձնարարութեամբն, ուղևորեաց զմեզ ի Ղաիմ առ պարոն գուբէռնաթ վասիլ վասիլիչ Կախովսկին. ի սեպտեմբերի 28 ելեալ ի Կրմէնչուկու, հոգտմբերի 2 մտաք ի Ղաիմ և ի լաղմէջիթ, ընկալեալ և անդ զպալծառափալլ ըստ հրամանի պալծառափալլ քնեազին, ուղևորեաց զմեզ, շրջիլ լամենայն ուրեք. ի Ղարասու, ի քէֆէ. ի ասկի Ղաիմ, ի վանքն մեր սուրբ խաչ և ի Սուդախ, ի Բաղչասարալի, ի լախիար՝ որ է Սևաստապօլիս, ուր նաւքն կանգնեալ կտն, և ի Դօղլով, տեսեալ մեր զամենայն և կրկին դարձեալ ի լաղմէջիթ. Դոյեմբերի 3. ելաք անտի. Ջզալի եղև մեզ լոյժ տեսանելն զաւերութիւն քաղաքացն և եկեղեցեացն և վանօրէիցն մերոց. Լի տրամամբ դարձաք անտի ի Նախիջևան ի նոյեմբերի 24. քաղաքն ամենայն ընդ առաջ ելին զրօշակօքն արհեստաւորաց և ամենայն պատրաստութեամբ, և մեծաւ փառաւորութեամբ ընկալան զմեզ ի ներս հանդերձ հոգևորական հանդիսիւս:

Կայսերունէու Ղաիմի ճանապարհորդութեան մարշրուտը ի սկզբանէ աչնպէս է կամուած եղել, որ նա պէտք է իջնանի եղել և Նախիջևանում: Մինչև անգամ այդ նպատակով

անբուհուն արն բարիքների համար, որ տէրութիւնը ցոյց էր տուել Բեսսարաբիոյ Հալերին, և արն և արն: Սրբազանի հակաակորդները օգտուելով նորա բացակայութիւնից, աշխատում են ամեն տեսակ զօրացնել իւրեանց կուսակցութիւնը, գրաւելով իւրեանց կողմը բոլոր արն մարդկանց, որոնք մի որ և է անձնական անբաւականութիւն ունէին առաջնորդի դէմ: Նոքա Արքամովի գահերէցութեամբ լաճախակի ժողովներ և դադարնի նիստեր են կազմում, զանազան ծրագիրներ ու ամբաստանագրեր են յօրինում և արագէտ կազմուելով ու պատրաստուելով, սպասում են մի պատեհ ըրպէի, որ արձակ-համարձակ մաքառումն սկսեն նորա դէմ և տապալեն նորան: Վերջապէս, արդ պատեհ ըրպէն էլ ներկայանում է: 1797 թուին մի Մանուկ Դերիջանեան ազգանունով մարդ սաստիկ ռիս և անձնական թշնամութիւն ունենալով առաջնորդի դէմ, համաձայնում է իւր վերայ առնել տէրութեան բողոք տալու գործը:

Նախիջևանում թեմական դպրանոցի ալթմուալ շինութեան տեղում, որտեղ եղել է Յովսէփ արքեպիսկոպոսի բնակարանը, նորա համար շինուել է մի ժամանակաւոր փայտեալ պալատ և, որ տեղացիներից կոչուել է «կոնակ» կամ տեղական արտասանութեամբ «խոնախ»: Մարչրուտը փոխուելուց լետոյ, «կոնակը» արլ ևս պէտք չէ եկել. նա մի առ ժամանակ մնացել է թափուր և տնգործադրելի, մինչև որ կալսերուհու հրամանով նա ընծալուել է Յովսէփ արքեպիսկոպոսին: Մեզ անլատ պատճառով արդ շինութիւնը ժամանակ անցնելուց լետոյ, դարձել է մասնաւոր մարդու սեփականութիւն և քանդուելով, տեղն ալթմուալ քարէ շինութեան հիմքն է ձեռքուել: Սակայն «խոնախ» անունը չէ կորել. նա մնացել է առաջ քարէ շինութեան վերայ, լետոյ անցել է արդ շինութեան մէջ երկար ժամանակ զետեղուած քաղաքային դպրոցի վերայ: Մեր ձեռքին գտնուում է արն պաշտօնական թղթի պատճէնը, որով «կոնակը» բարձրագոյն հրամանով ընծալուել է Յովսէփ սրբազանին: Նորա մի երեսի վրայ գրուած է հայերէն «դիվէրէցն պաղըլված քիրնէ» ծանօթութիւնը, իսկ միւսի վերայ հետեւեալ պաշտօնական զեկուցման պատճէնը՝ «Графъ Платонъ Александровичъ! Пріемли за благо, представленіи ваши отъ 28 истекающаго декабря, соизволяемъ Мы, какъ навсегдашнее пребываніе въ дубесарахъ обремененнаго лѣтами митреполита Кирилла, съ производствомъ тамо пожалованной еми пенсіи, такъ и на возвращеніе архіеписку армянскому Іосифу обращеннаго въ путевый дворецъ дома его въ Нахичеванѣ. безъ взысканія съ него употребленныхъ на перестройку онаго казенныхъ денегъ двухъ тысячъ рублей.

խակոյն և եթ Աբրահամովի տանը ժողով է կազմուում և խմբագրուում մի ամբաստանագիր, որի մէջ յօդուած առ յօդուած արձանագրուում են այն բոլոր զեղծումները, որ, նոցա կարծիքով, թոյլ էր տուել գործելու առաջնորդը: Եւ որովհետեւ նոքա զիտէին, որ առաջնորդն այնքան մեծ ազդեցութիւն ունի, որ հասարակ մեղադրանքներով նորան չէ կարելի տապալել, ուստի և նոքա իւրեանց ամբաստանագրին այնպիսի ձև են տալիս որ մի կողմից նա շահասէր և գող է դուրս գալիս, միւս կողմից տէրութեան դէմ գործող և ապստամբ:

Դերիշանեանը Պետերբուրգ գնալով, այդ ամբաստանա-

Пребываемъ вамъ благосклонный. На подлинномъ подписано собственною ея императорскаго величества рукою тако: Екатерина. Генваря 4 дня 1794 года въ Санктпетербургѣ».

«Կոմս Պլատոն Ալեքսանդրովիչ, ձեր անցեալ Դեկտեմբերի 23-ից արած առաջարկութիւնը յօժարութեամբ ընդունելով, մենք բարեհաճուում ենք շնորհել մեր համաձայնութիւնը որպէս ծերունի Կիւրեղ մետրոպոլիտի իրան լատկացրած թոշակով Դուքասարում մշտական կեցութիւն ունենալու մասին, նորնպէս և Նախիջևանում գտնուած և ճանապարհորդական պալատ դարձրած Հալոց Յովսէփ արքեպիսկոպոսի տունը նորան վերադարձնելու մասին, առանց նորա (պալատի) վերաջ ծախսուած արքունի երկու հազար ռուբլին նորանից լետ պահանջելու: Սնում ենք բարեհաճ դէպի ձեզ: Իսկականի վերալ Նորին Կայսերական Մեծութեան սեփական ձեռքով ստորագրած է այսպէս Կատեբինէ: 1794 թուի Յունուարի 4-ին Սանկտպետերբուրգում»:

Սրբազանի 1793 թուականի ճանապարհորդութիւնը Նկարագրուած է Ս. Խաչի տպարանում տպագրուած Երևանցի Խօջենց Մարգարի «Տեղեմաքի» թարգմանութեան վերջաբանում: Տես էջ. 363 - 369:

Իսցի 1787, 88 և 93 թուականների ճանապարհորդութիւնից, Յովսէփ սրբազանը 1781 թուին արել է և մի ճանապարհորդութիւն դէպի Պետերբուրգ Եկատերինէսլաւի, Պոլտաւայի, Կիևի և Մոսկուայի վերալով, որի հետաքրքրական նկարագրութիւնը թողել է նա մեզ իւր ձեռագիր «Հաւթարում»-Եկատերինոսլաւում նա հիմնարկել է ա. Աստուածածին եկեղեցին այնտեղ մնացած Հալերի համար. վրանի տակ պատարագ է մատուցել և ձեռնադրել է Մարտիրոս անունով մէկին նոցաքահանայ: Եկատերինոսլաւի Հալերը Ղրիմի գաղթականութեան մի փոքր մասն էին. նոցա մեծամասնութիւնը կաթոլիկ էր, փոքրամասնութիւնը—լուսաւորչական: Կաթոլիկներն եկել էին ընդհանուր գաղթականութեան ժամանակ իւրեանց առաջնորդ Խաչատուր վճռողպետի հետ և իւրեանց բնակու-

զրից մի օրինակ ներկայացնում է կալսեր, միւսը զենեքալ-
պրոկուրորին և երրորդն ուղարկում է Ռաստովի դատարանին:
Ամբաստանազիրը, բացի իւր, ամբաստանողի անձին վերաբե-
րեալ զանազան գովասանքներից, պարունակում էր իւր մէջ
3 մեղադրական կէտ սրբազանի դէմ՝ ա.) Արքեպիսկոպոսը
իւր համախոհների հետ միասին դողացել է Ղարմից բերած
եկեղեցական իրեղէնները և սեփականացել է Նախիջևանի
եկեղեցիներում հաւաքուած փողերը. բ.) Նա թույլ չէ տուել
վաճառականներին խանութներ շինել քաղաքի միջավայրում
գտնուած հրապարակում, ասելով, որ ալդ հրապարակը պատ-
կանում է եկեղեցուն, իսկ եկեղեցին իւրն է. գ.) Նա ցանկա-
նալով անձնիշխան լինել, աշխատել է ոչնչացնել քաղաքա-
ւին զումը և նորա կանոնադրութիւնը և համոզել է ալդպէս
անել և միւս Հալերին, ոմանց սպառնալով, ոմանց էլ աղնուա-
կանութիւն տալ խոստանալով. զ.) Անիծել է այն կանոնադ-

թեան համար տեղ էին ստացել Եկատերինոսլաւում, որ այն
ժամանակ նոր միայն չէնանում ու քաղաք էր դառնում. կա-
թոլիկ Հալերի հետ բնակութեան տեղ ու հող էին ստացել
Եկատերինոսլաւում և մի քանի տուն լուսաւորչական Հալեր,
որոնք չէին կամեցել մեծամասնութեան հետ գալ Նախիջևան:
Առ հասարակ բոլոր գաղթականներն էլ իւրեանց կամքի հա-
կառակ, չուզենալով էին դուրս եկել Ղարմից. նոքա չէին հա-
ւանում իւրեանց նոր հայրենիքին և լարմար բոպէ էին որո-
նում նորից վերադառնալու իւրեանց նախկին բնակութեան
տեղերը. շատերը նոցանից տեսնելով, որ արդէն դժուար է
թուլտութիւն ստանալ վերադառնալու, մինչև անգամ ինքնա-
կամ թողնում, փախչում էին Ղարմ: Վերադառնալու ձգտումը
նամանաւանդ բուռն է լինում Եկատերինոսլաւի Հալերի մէջ.
Նոքա հէնց սկզբից խնդրամատուց են լինում տէրութեան
թուլ տալու նոցա վերադառնալու, բայց գաղթականների ալդ
ձգտումը տէրութեան շատ էլ հաճոյ չլինելու պատճառով գոր-
ծը ձգձգում է ու երկարում: Վերջապէս, տէրութիւնը զի-
ջանում է Եկատերինոսլաւոց բուռն ցանկութեան և դադ-
թականները 12 տարի Ռուսպետանում մնալուց լետով վերա-
դառնում են իւրեանց նախկին բնակութեան տեղը, գլխաւորա-
պէս Ղարաուսթազար: Ինչ ասել կուզի, որ ալդ դէպքում շատ
օգնում է նոցա, նախ այն հանգամանքը, որ Ղարմի թերա-
կղզին ալդ ժամանակ արդէն անցել էր Ռուսաց ձեռքը, երկ-
րորդ, խաչատուր վարդապետը և մանաւանդ Յովսէփ արքե-
պիսկոպոսը, որ իւր 81 թուի ճանապարհորդութեան ժամա-
նակ տեսնուել էր Պատեօմկինի հետ և առանձին կերպով խընդ-
բել էր ալդ մասին:

քութիւնը և Դումը և իրեն Դերիջանեանին, որ աշխատում էր ընդունել տալ և հաստատել Դումը. ե.) Տէրութեան տուած քաղաքային կանոնադրութեան տեղ նա կաղմել ու տպագրել է իւր սեփական կանոնները, քաղաքի կառավարութեան համար 24 հոգաբարձու կարգելով. զ.) խառնուել է քաղաքի կառավարութեան գործերին և փախստական Հայերին իւր կողմից անցաթողի է տուել. է.) Գնացել է Օշակով իշխան Պատեօմկինի մօտ հասարակութեան կողմից խնդրելու, որ հասարակութեան ապաւինները չպահանջուեն, և այդ բանի համար ծախսել է 11 հազար ռուբլի ու հաշիւ չէ տուել, այլ միայն մի քանի մարդու և իւր կառապան Անդրէասի համար աստիճան է ձեռք բերել և ը.) ծեծելով արտաքսել է տուել իրան, Դերիջանեանին Դումից և այնպէս նեղել է առևտրական գործերի մէջ, որ ինքը 1200 ռուբլու պարտքի տակ է ընկել: Իսկ ինքը, ընդհակառակը, աշխատել է ամեն բանում լօգուտ տէրութեան և քաղաքին գործել—հաստատել է Դումը և ինքն անդամ է ընտրուել, թարգմանել է հայերէն քաղաքային Դումի կանոնադրութիւնը, քաղաքի եկամուտը 450 ռուբլուց հասցրել է 4 հազարի, դաստիարակել ու կրթել է հալմանուկներին, այլն և այլն:

Եթէ ամբաստանագրի այդ մեղադրական կէտերի մէջ կալ մի ճշմարտութիւն,—այդ սիպն այն էր, որ առաջնորդը գործերը կառավարում էր անձնիշխան կերպով և խառնուում էր քաղաքային գործերին. սակայն այդ ևս մեղադրանք չէր կարելի համարել, որովհետեւ ինքը տէրութիւնն էր լանձնել նորան գաղթականների ընդհանուր տեսչութիւնը: Յայտնի է, որ իշխան Պատեօմկինը 1780 թուին բարձրագոյն հրամանով ծանուցանելով նահանգապետ Չերտկովին բոլոր Ռուսաստանի Հայերին սրբազան Յովսէփ արքեպիսկոպոսի իրաւասութեան ենթարկելու մասին, առաջարկել էր լալտնել նոցա, որ այնուհետեւ նոքա իւրեանց կեանքի բարեկարգութեան վերաբերեալ բոլոր գործերում դիմեն սրբազանին, իբրեւ ականաւոր հոգևորականի և ամեն տեսակ լարգանքի արժանի հօտապետի:

Ռաստովի դատարանը ձեռնարկելով գործի քննութեան, հրաւիրում է Աբրամովին, քաղաքագլխին, Մագիստրատի դատաւորներին, 24 հոգաբարձուներին և 300-ի չափ մարդ քաղաքացիներից վկայութիւն տալու և պարզելու խնդիրը: Աբ-

բամովը, բացի նորանից, որ հաստատում է Դերիվանեանի ասածները, այլ իւր կողմից ևս աւելացնում է հետեւեալ մեղադրական կէտերը՝ ա.) Ս. Խաչ վանքը կառուցուել է ոչ թէ սրբազանի ծախքով, ինչպէս որ նա ասում է, այլ հանգուցեալ Սիմէօն վարդապետի կտակած, հասարակութեան տուած և եկեղեցիներում հաւաքուած փողերով. բ.) Մայր եկեղեցում 16 տարուաւ ընթացքում հաւաքուած փողը ընչի վերայ է գործ դրուել— լաւանի չէ, և հասարակաց արդիւնքով հիմնարկուած մայր եկեղեցու շինութիւնը վերջ չունի. բ.) Հնդկաստանից գալորցներ շինելու. համար ստացուած մեծաքանակ գումարները լաւանի չէ, թէ ինչ բանի համար է գործ դրուած, որովհետեւ քաղաքը դեռ դպրոց չունի. դ.) Սրբազանը Նախիջևանից Ղաիմ փախած Հալերին անցաթուղթ է տուել և ինքը ևս նպաստել է նոցա փախչելուն: Իսկ ինքը ծառայել է տէրութեան, անձամբ մասնակցելով պատերազմներին և իւր ծախքով կամաւորներ պատրաստելով. ծառայել է և քաղաքին, օգնելով աղքատ Հալերին, տէրութեան Հալերին պարտք տուած 243,754 ռուբլի մեծ գումարի նոցա ընծալելու գործին նպաստելով և քաղաքին շնորհած հողի քանակութիւնն աւելացնելու գործի համար աշխատելով:

Քաղաքազուխը, դատաւորները, հոգաբարձուները և քաղաքացիները համարենա թէ միաբերան հերքում են Դերիվանեանի և Սրբամովի ասածները և վկայում են, որ ինքեանք բացի լաւութիւնից, ոչինչ վատութիւն չեն տեսել իւրեանց առաջնորդից. նա նոցա բարերարն է և պաշտպանը, նա ոչ թէ միայն չէ սեփականացրել իրեն հասարակութեան ստացուածքը, այլ և լաճախակի ինքն իւր ունեցածն է ծախսել եկեղեցիների և վանքի վերայ. նա նոցա միշտ սովորեցրել է սիրել Ռուսաց օրէնքները և հնազանդել նոցա. իսկ եթէ Դերիվանեանը և Սրբամովը սրբազանի դէմ են գնում,— ալդ ոչ ալ ինչ է, եթէ ոչ միայն նոցա անձնական վատ լարաբերութիւնից և անհանգիստ բնաւորութիւնից:

Դատարանի կատարած մանրամասն քննութիւնից պարզւում է՝ ա.) Գետթիւն անող Դերիվանեանը անձնական թըշնամութիւն և ոխ ունի Սրբազանի դէմ ասն բանի համար, որ նա նորան բանտարկել է տուել հանգուցեալ Սիմէօն վարդապետի վանքի օգտին կտակած 500 ռուբլի գումարը սեփականացնելու համար: Նա առաջ կամեցել է բանտում թունաւո-

քուեւ, լետոյ բանտից դուրս գալով, սկսել է ամբոխի մէջ սուտ լուրեր տարածել արքեպիսկոպոսի մասին, իբրեւ թէ նա գողացել է եկեղեցական փողերը և սեփականացրել է եկեղեցական իրեղէնները. նա իրան հովանաւորող Աբրամովի տանը թուղթ է կաղմել և հասարակութեան կողմից հաշիւ է պահանջել արքեպիսկոպոսից և ստացել է, բայց ոչնչացրել է նորան. Բ.) Քաղաքի միջավայրում գտնուած հրապարակը, նորա չորս կողմը խանութներ շինելուց լետոյ, զաճառականները, իբրեւ իւրեանց համար անպէտք դետին, լանձնել են սրբադանին մայր եկեղեցու համար: Առաջին նուագ ալդ տեղի վրայ շինուել է փայտէ եկեղեցի, իսկ լետոյ արդէն հիմնարկուել է գոլութիւն ունեցող քարէ շէնքը. Գ.) Սրբազանը արգելք չէ եղել 1785 թուականին հրատարակուած կանոնադրութեամբ Դումի հաստատուելուն Նախիջևանում: Եկատարինէսլաւի նահանգական կառավարութեան հրամանով 1788 թուին բացուել է դումը, բայց լետոյ Հալերի Ռուսաց լեզուին ծանօթ չլինելու պատճառով, փակուել է և նորա տեղը հրատարակուել «Դաշնադրութիւն միաբանութեան» թուղթը և հաստատուել է 24 հոգաբարձուների կառավարութեան կարգը, որ բոլորովին համապատասխանում է Հալերին շնորհած հրովարտակի հինգերորդ լոգուածին. Դ.) Դերիջանեանը զանազան մարդկանցից երեք հազարի չափ փող է ժողովել, խաբելով, որ իբր թէ նա կարող է նոցա համար ազնուականութեան իրաւունք ձեռք բերել, բայց ալդ փողից, առանց հետևանքի, ծախսել է 1290 ռուբլի և, ի միջի ալլոց, ալդ մարդկանց համար Հալոց պատմութիւնից սուտ ազգաբանութիւն է կաղմել. Ե.) բոլոր վկայութեան կանչուած քաղաքացիներից միայն մի Ռաբի Կարապետով ազգանունով արհեստաւոր է ցոյց տուել, որ ինքն իբր թէ լսել է, թէ ինչպէս արքեպիսկոպոսը Դերիջանեանի մասին եկեղեցում ասել է՝ «Եւ թող անիծեալ լինի նա և իւր Դումը». Զ.) Արքեպիսկոպոսը հասարակութեան գործերին չէ խառնուել, ալլ միայն իւր Ղուիմում եղած ժամանակ երեք հալի, որոնց անցաթղթի ժամանակը անցէ կացած եղել, տոմսակ է տուել. սակայն նոքա շուտով դորանից լետոյ վերադարձել են Նախիջևան. Է.) Օչակով գնալու համար սրբազանին տրուած է եղել ոչ թէ 11 հազար ռուբլի, ալլ ինչն հազար: Հասարակութիւնը երբէք չէ կամեցել և չի պահանջել ալդ փողի հաշիւը արքեպիսկոպոսից, զո՞հ լինելով

որ իւրեանց ցանկացածը իրագործուել է. իսկ ինչ որ վերաբերում է աստիճաններ տալու գործին, — իշխան Պոտեօմկինն է վարձատրել մի քանիսին նոցա տէրութեան ցոյց տուած ծառայութեան համար, նահանգապետի և Մագիստրատի տուած վկայականների հիման վրայ: Անդրէասն էլ սրբազանի կառապանը չէ եղել, ալ անձնական քարտուղորը. Ը.) Դերիշանեանին քաղաքացիք 1796 թուին արտաքսել են Դումից ոչ թէ սրբազանի յորդորանքով, ալ իւրեանց կամքով, զզուած լինելով նորա անհանգիստ, ստահակ և ըմբոստ կեանքից ու ընաւորութիւնից: Դերիշանեանն առետուր չէ ունեցել, որ կարելի լինէր նեղել նորան վաճառականական գործերում. նա մի չքաւոր մարդ է եղել և առաջ ծառայել է Մագիստրատում իբրև պահապան, լետու Աբրամովի միջնորդութեամբ և բարեխօսութեամբ միայն Դումի անգամ է ընտրուել:

Մի երկու հոգի են միայն նորան նպաստաւոր վկայութիւն տուել: Դոցանից մէկն ասել է, որ իբր թէ ինքը լսել է, թէ Բնչպէս սրբազանը ասել է՝ «եթէ Դերիշանեանին չարտաքսեն, ինքը Նախիջևանում չի մնալ». իսկ միւսը իբր թէ տեսել է, թէ Բնչպէս քաղաքագլուխ Սահակեանը Դերիշանեանին Դումից դուրս անելու ժամանակ մէկ անգամ զարկել է նորան: Եւ առհասարակ ամբաստանադրել մէջ լիշուած գովասանքները Դերիշանեանի մասին ոչ մի բանով չեն ապացուցուում: Այն երկու գովասանական թղթերը, որ նա ներկայացրել է իբրև ապացոյց իւր արածներին, ամենին նշանակութիւն չունին, որովհետև նոցանից մէկը կրում է միայն Աբրամովստորագրութիւնը, ուրեմն մի արնայիսի մարդու ստորագրութիւն, որ հովանաւորում է Դերիշանեանին և անձնական թըշնամութիւն ունի սրբազանի դէմ, իսկ միւսը, թէ և կրում է 117 մարդու ստորագրութիւն, բայց նոքա ըլլորեքեան արնայիսի տգէտ և անզրազէտ մարդիկ են, որ հրաժարւում են իւրեանց ստորագրութիւնից, ասելով, որ ինքեանք հարբած լինելով չեն իմացել, թէ Բնչ են ստորագրում:

Դատարանն իւր ալդ քննութեան արդիւնքը 1798 թ. Սեպ. 18-ին ներկայացնում է Սելեցկի նահանգապետին, նա էլ նոյնն իւր կողմից համարեմ առանց փոփոխութեան, միայն աւելացնելով ալն, որ Աբրամովի ցուցմունքները, իբրև սըրբազանի անձնական թշնամու ասածներ, նշանակութիւն ունենալ չեն կարող, ներկայացնում է գեներալ պրոկուրոր Լա-

պուխինին, Դերիջանեանը իմանալով, որ թէ Դատարանի քննութեան արդիւնքը և թէ նահանգապետի կարծիքն իւր համար նպաստաւոր չեն, նոյն թուի նոյեմբերի 13-ին նորից բողոք է ուղարկում կալսեր անունով, ալս անգամ արդէն ամբաստանելով նահանգապետին և Դատարանը, իբրև թէ առաջինը 26 հազարի արժողութեամբ ընծաներ կաշառք է ստացել սրբադանից և քաղաքագլխից, երկրորդն իբրև թէ ուշացնելով և ժամանակին չսկսելով քննութիւնը, *Ֆլասել* է իւր գործին: Այդ բողոքի հիման վրայ ձերակոլտը բարձրագոյն հրամանով նոյն թուականի Դեկտեմբերի 17-ին մեկնութիւն է պահանջում նահանգապետից և դատարանից: Նահագապետն իր վրայ արած ալդ ամբաստանութիւնից արդարանում է նորանով, որ ապացոյց է տալիս, թէ Նախիջևանը չէ կարող իրան 26 հազար ուռըլու կաշառք տալ, քանի որ ամբողջ քաղաքն ալդ գումարի տասներորդ մասի չափ եկամուտ չունի, և վշտացած խնդրում է պատժել իւր վրայ ալդպիսի քսութիւն անող Դերիջանեանին. իսկ Դատարանը պատասխանում է, որ ինքը, ճիշտ է, գործի քննութիւնն ուշացրել է, բայց նա արել է ալդ նախ, իրանից բոլորովին անկախ պատճառներով, երկրորդ, որ գործի ալդպէս ուշի մնալն ամենեին չէ *Ֆլասել* և չէր էլ կարող *Ֆլասել* Դերիջանեանին. Դերիջանեանը պահանջել է, որ Դատարանը բոլոր քաղաքացիներին հարց ու փորձ անէ, բայց Դատարանը ալդ հնարաւոր չէ համարել, որովհետեւ ալդ կնշանակէր մի կողմից բոլոր քաղաքը բաւականին երկար ժամանակամիջոցով դատապարտել անգործութեան, միւս կողմից մի եթէ ոչ անիրագործելի, զոնէ, մի տաժանելի և ապարդիւն աշխատանքի ձեւնարկել:

Դատաստանական գործն երկարում է և քաղաքացիք ու գիւղացիք տուժում են ալն նիւթական և բարոյական զրկանքներից, որ նոքա անընդհատ կրում էին Դերիջանեանի քսութիւններէր: Նիւթականապէս նոքա տուժում են, որովհետեւ մշտապէս դատաստանական գործերի մէջ լինելով, վատնում են և՛ իւրեանց ժամանակը և՛ փողը, բարձի թողի են անում իւրեանց գործերը. իսկ բարոյապէս նոքա զրկում են, որովհետեւ հետզհետէ նոցա անձնական լարաբերութիւնները լարւում, հետզհետէ թշնամութիւնը, ատելութիւնը, ռիւր թոյն է դնում նոցա գերդաստանների մէջ, որովհետեւ զրացի օտարների առաջ կամացկամաց նոքա կորցնում են իւրեանց խա-

դադասիրութեան վարկը, որովհետեւ նոքա անդադար ամբաստանուած են իբրեւ աստեղծած մարդիկ, որ չճանաչելով իւրեանց բարերար եպիսկոպոսի անդնահատելի երախտիքը, դատաստանի և քննութեան տակ/են ձգուած նորան, և ալլն և ալլն: Այդ բոլոր զրկանքներին վերջ տալու համար, վերջապէս, քաղաքացիք և զիւղացիք քաղաքագլխի, աստիճանաւորների, քաղաքացիների, ծերերի և տանուտէրների ստորագրութեամբ մի համախօսական են կազմում և արձանագրելով նորա մէջ Դերիշանեանի բոլոր արածները, ուղարկում են 1799 թուին գեներալ-պրովուրորին և խնդրում հանել, արտաքսել նորան իւրեանց միջից: Գործի քննութիւնը վերջանում է միայն 1800 թուին: Դերիշանեանը լանցաւոր է ճանաչուած և դատապարտուած տաժանակիր աշխատանքի, լանցաւոր է ճանաչուած և դատապարտուած և Աբրամովը, զրկուելով իւր ունեցած պաշտօններից և միւս անգամ մի որ և է պաշտօն ունենալու իրաւունքից:

Եկատարինէսլաւի նահանգական կառավարութեան կարգադրութեամբ Ռասսովի ոստիկանապետը զալիս է Նախշևան, բռնում է Դերիշանեանին և հրապարակով շղթաւելով և մտրակահար անելով, ուղարկում է Սիբիրիոյ Ներչինսկ քաղաք: Շատ ծանր տպաւորութիւն է անում այդ պատիժն ու դատապարտութիւնը ժողովրդի վերաբերման թաւոյն ընդ, բոլորեքեան էլ համոզուած են լինում, որ տէրութիւնը կը պատժէ Դերիշանեանին և Աբրամովին, բայց ոչ ոք չէր սպասում, որ պատիժն այդպէս խիստ կլինէր. այդ առաջին անգամն է լինում, որ տէրութիւնն այդպիսի խիստ միջոցի է ղրմում զաղթական: Դերի վերաբերութեամբ: Ժողովրդի սիրտը սաստիկ ահ է ընկնում, բոլորեքեան թողնում, անցնում են առաջնորդի կողմը և Աբրամովի կուսակցութիւնը իսպառ քալքաւում և ոչնչանում է: Աբրամովի հետ մնում են միայն ամենալամաւորները: Նոքա թէ և աշուհետեւ քաշում են գործելու ասպարիզից, բայց ցոյց տալու համար, որ իւրեանց դատը արդար էր և Մանուկը զուր տեղը միայն զոհուեց, նահատակ են հռչակում նորան ժողովրդի մէջ և ուրիշ կերպ չեն կոչում նորան, բայց թէ «Բրանելի Մանուկ»: Սակայն կամաց-կամաց Աբրամովի կուսակցութեան այդ վերջին բեկորներն էլ մօտենում են սըրբազանին և հաշտուած նոյա հետ: Ինքն Աբրամովն էլ տեսնում էր որ զրկուեց իւր առաջնույ ունեցած բոլոր լարգան-

քից և սլառիւններից և բոլորի աչքից ընկաւ, ծածկելով սրտի խորքում իւր իսկական զգացմունքները, սկսում է իրան տրամադիր ցոյց տալ հաշտուելու և միայն լարմար բոպէի է սպասում վճռական քալ անելու: Այդ լարմար բոպէն էլ շուտով ներկայանում է: 1800 թուականի Օգոստոսի վերջին Յովսէփ արքեպիսկոպոսը Պետերբուրգից գալով, մի վերջին անգամ էլ ալցելում է իւր հիմնարկած Նախիջևանը: Մենք ասում ենք «վերջին անգամ» որովհետեւ այդ ժամանակ արդէն երջանկալիշատակ Պօղոս կալսրը նորան ճանաչել էր կաթողիկոս ամենայն Հայոց և փառքով ճանապարհ էր ձգել զէպի Ս. Էջմիածին, խոստանալով նորա լեռնից հասցնել և նորա հաստատութեան կալսերական հրովարտակը: Ահա այդ հանգամանքից օգուտ է քաղում Աբրամովը և քաղաքի մեծամեծներին միջնորդ ձգելով, ձգտում է հաշտուել առաջնորդի հետ և արժանանալ նորա ներողութեան: Մեծամեծները նորա արտաքին խոնարհութիւնը և թախանձագին աղանչաքները զղջալու և ապաշաւելու նշան համարելով, քանիցս միջնորդում և խնդրում են արքեպիսկոպոսից, որ նա ընդունէ Աբրամովին և ներէ նորա խնցածները, բայց նա աւելի լաւ ճանաչելով այդ փառասէր և ըմբոստ զինուորականի բնաւորութիւնը, տատանում է կատարել նոցա խնդիրքը և միջնորդութիւնը, ասելով, որ Աբրամովը մի ախպիրսի փոփոխամիտ և անհաստատ բնաւորութեան տէր մարդ է, որ երբէք չէ կարելի հաւատալ նորա զղջման արտաբայտութիւններին: Սակայն որպէս զի և մեծամեծների խնդիրքը գետին ձգած չլինի և իւր հոգեւորական պարտականութիւնը կատարած լինի, նա համաձայնում է ներել նորան, միայն թէ պայման է դնում, որ այդ ներողութիւն խնդրելու դործողութիւնը կատարուի հանդիսաւոր կերպով, հրապարակօրէն բոլոր ժողովրդի առաջ մար եկեղեցում: Նշանակած օրը որոշեալ ժամին ժողովրդի բազմութիւնը խռնում է եկեղեցին, եկեղեցու գաւիթը, բակը և հրապարակը. եկեղեցում չքեղ գահի վրալ բազմում է կաթողիկոսը, իսկ Աբրամովը սպիտակ շապիկ հագած չոքէչոք գնալով, հրապարակով մտնում է եկեղեցի, համբուրում է կաթողիկոսի աջը և ներողութիւն է խնդրում:

Պատիժն անկասկած շատ խիստ էր և մի փոքր էլ չէր համապատասխանում մեր բարձր հոգեւորականներին լատուկ ներողամտութեան, բայց Յովսէփի համար շատ թանգ էր նո-

րաշէն քաղաքի հանգստութիւնը և խաղաղ դարգացումն. նա տեսնում էր, թէ որքան նիւթական և բարոյական վնաս կրեց քաղաքը Աբրամովի արածներից, և կամենում էր իւր ալդ խստութեամբ միանգամ ընդ միշտ զաղթականներին օրինակ հղց տալ, որ նոքա աշուհետե զգուշանան նորա շաղով ընթանալու, նորա բռնած ընթացքին հետեւելու և սովորեն ջուկել իւրեանց համար սեր սպիտակից, սովորեն ճանաչել իւրեանց չարն ու բարին: Քաղաքը դեռ նոր էր հիմնարկուել, հալ հասարակութիւնը դեռ նոր էր սկսել կազդուրուել, նոր էին դեռ կաղմակերպուել նորա բոլոր հաստատութիւնները. պէտք էր ամեն կերպ զգուշանալ, որ կանոնաւոր ճանապարհի վրայ դրուած զաղթականների կեանքի զարգացումն ոչ մի արգելքի չհանդիպի, աջ ու ջախ չշեղուի: Աբրամովները վատ օրինակ էին. պէտք էր անպատճառ նոցա արմատախիւ անել: Ալդ էին պահանջում զաղթականների հալական կեանքի շահերը:

Յովսէփի գուշակութիւնները Աբրամովի վերաբերութեամբ շուտով արդարանում են: Նա, որ իւր իսկական զգացմունքները սրտի խորքում պահելով, ապաշափել ու ներողութիւն էր խնդրել միայն երեսանց իւր առաջուայ դրութիւնը ձեռք բերելու համար, կաթողիկոսի Նախիջևանից հեռանալուց լետով, նորից սկսում է գործ դնել իւր առաջուայ չարութիւնները, որով և նորից վիզովում է ժողովրդի խաղաղութիւնը: Վերջապէս, բոլորեքեան աշնպէս զգւում են նորանից, որ քաղաքազլի, դատաւորների, հոգաբարձուների, պատուաւոր քաղաքացիների և զիւղերի զլխաւորների ստորագրութեամբ 1802 թուին 32 մեղադրական կէտերից բաղկացած մի համախօսական կաղմելով, լատուկ պատգամաւորների ձեռքով ուղարկում են Պետերբուրգ և խնդրում են հեռացնել նորան իւրեանց միջից: Ալդ համախօսականի մեղադրական կէտերից մէկը վերաբերում է մեր վերը լիշած Յովսէփ սրբազանի վերջին անգամ Նախիջևան գալու և Աբրամովի ներողութիւն խնդրելու պատմութեան: «Եւ երբ որ սրբազանն մեր Յովսէփին իւր արժանաւորութեանն կաթողիկոսութեան գնալու լիշմիածին սոյն ժամանակին եկաւ քաղաքս մեր, ասուած է աշտեղ, և գնալովն նորա, պարոն Ապրահամովի ի մեղանից առաջի անցանացն խնդրեացն թէ բարեխօսութիւն անեն վասն իւրեան և նոցա առաջի անցանացն ի նորին սրբազնութենէն խընդրածներն թէ ամենաւն կերպիւ և անզգամութեամբ զուր տեղն

ընդէմ նորին սրբազնութեանն արարողութեան թողութիւն շնորհելու, և լետու տանելովն նորա, պարոն Աբրամովին աւագ լիկեղեցին մերում շատ ժողովքիւ առաջի սրբազնութեանն բողոքմանելով թողութիւն խնդրելն, և նա օրհնելով և թողութիւն տալով պատուիրեաց նմա, թէ հաշտութեամբ և հանգըստութեամբ կենալ ալսուհետեւ քաղաքումս և ի հետ ժողովրդոցըն մերում բնակողացն, ալս ահա երկրորդ ոմն է որ վասն դիշ չէր ալս առաջի պատիժն, աչնպէս երեւցաւ մեզ որ ինչ ալսուհետեւ նա հանդարտ կուկենա առաջի արարմունքներէն տէլին, միայն թէ աչն ժամանակին նա սրբազան կաթողիկոսն հաւատացուցեալ էր թէ նա չի մոռնալ իւր արարմունքն տէլի, որ ինչ նա, պարոն ապրամովն ընդ ալն իւրում անբարոյականութեամբն չի կարողանալ հանգստութեամբ բնակել, ալժամ եղեալ է հաստատութեամբ և ճամարտութեամբ: Թէ ինչ հետեանք է ունենում ալդ համոխօսական խնդիրքը, —մեզ լալտնի չէ. մենք միայն գիտենք, որ Աբրամովը միշտ չէ իւր կեանքի վերջը մնացել է Նախիջկանում և մեռնելով թաղուել է ս. Նիկողայոս եկեղեցու բակում:

ԴՆՈՒՄ Զ.

Մենք ասացինք, թէ Յովսէփ սրբազանը 1800 թուի Օգոստոսին մի վերջին անգամ էլ ալցեւեց Նախիջկանը: Ալդ ալցեւելութիւնը լինում է Նախիջկանցիների ցանկութեամբ, որոնք լսելով, որ իւրեանց քաղաքի հիմնադիրն ընտրուել է կաթողիկոս և հաստատուել է կալսրից, ցանկանում են մի վերջին անգամ էլ նորան իւրեանց մէջ տեսնել և նորա օրհնութիւնն առնել: Ալդ նպատակով նոքա թուղթ են գրում վեհափառին և հրաւիրում են Նախիջկան, խոստանալով տալ նորան հազար ռուբլի ճանապարհածախս, հազար էլ աջահամբուր: Կաթողիկոսի հաճութիւնը ստանալուց լետու, նոքա Օգոստոսի 5-ին քաղաքալին Դումի նիստ են կազմում և կարգադրում են վեհափառի համար իջկանելու տեղ պատրաստել «խօնախում» և բոլոր լինելիք ծախսերը հասարակութեան վերալ առնել: «1800 ամին և ամսեանն օգոստոսի, 5-ին մեք ի ներքու ձեռագրեալքս, Նախիջկանու հալոց հասարակութեան հոգաբարձու անձինքս, ասուած է ալդ նիստի արձանագրութեան մէջ, լետուք ալս ձեռնագիրս Նախիջկանու հա-

լոց հասարակութեան տուժի, պարոն կլաւալ աղալ Կարապետ Օվանէսովին, որ մեք միւր խորհրդիւն Նորին բարձր սրբազնասուրբ կաթողիկոսն Մօսկով էղած ժամանակին գրով խընդրեալ էաք թէ քաս, Նախիջևան օրհնութիւնն ձեր շնորհնացես հասարակութեան մերոյ ևս մեք մեր մէջն խորհուրդ արած էինք թէ որքան, ուտելիքի և կամ խմելիքի մեծի սրբազնասուրբ կաթողիկոսի, խօնախումն խարճ էրդանը հասարակութենէ մերմէ խարճենք տէլին: Որ ահա ձեռագիրս ալս ետուք պարոն կլաւալ աղալ Կարապետ Օվանէսովին որ երբոր սրբազնասուրբ կաթողիկոսն մեր քալ Նախիջևան քաղաքս, մինչի նորա աստի գնալն որքան խարճ և մասրաֆ լինինը, նալ աղալ Կարապետ Օվանէսովն թող խարճէ հասարակութեան փողէս որ մեղ ընդունելի էս:

Որ նախիջևանցիք խոստացած են լինում տալ կաթողիկոսին, եթէ նա բարեհաճէր ալցելել Նախիջևանը և իւր շնորհաբեր օրհնութիւնը տար կարօտեալ ժողովրդին, երկու հազար ռուբլի և հատուցանում են ալդ գումարը Նորին Վեհափառութեան—, ալդ երևում է նոցա Դումի երկրորդ որոշումից, որ տեղի է ունենում նոյն օգոստոսի 15-ին, երբ արդէն վեհափառը Նախիջևանում է լինում: «1800 ամին և սմսեանն օգոստոսի 15 ին մեք ի ներքոյ ձեռագրեալքս Նախիջևանու քաղաքի հասարակութեան հոգաբարձու անձինքս, գրուած է Դումի ալդ երկրորդ նիստի արձանագրութեան մէջ ետուք ալս ձեռագիրս հալոց Նախիջևանու հասարակութեան պարոն կլաւալ Կարապետ Օվանէսովին, որ ալսմէ առաջ պատուական հալրապետն մեր սրբազնասուրբ կաթողիկոսն ամենայն հալոց տեղս չէր և մեք հոգաբարձու անձինքս ընդ կլաւալին և ընդ դատաւորօքն մեր խորհուրդ արալաք և նորին սրբազնասուրբ կաթողիկոսին խնդիրք գրեցաք, որ նորալ քալոյն տեղս Նախիջևան խնդրեցաք, և խոստացաք նորալ սրբազնասուրբ կաթողիկոսին բօշտի փողն տալ հինգ հարիւր ռուբլի ևս վաան ճանապարհի խարճի տալ ևս հինգ հարիւր ռուբլի, ևս իւրեանն ընծալ տալ հազար ռուբլի Ալթմ նալ սրբազնասուրբ կաթողիկոսն մեր եկաւ քաղաքս մեր Նախիջևան, և մեր հասարակութեանս պարոն կլաւալ Կարապետ Օվանէսով ի հասարակութենէ մերմէ վերոյիջեալ երկու հազար ռուբլի փողն պէթկէ որ դոնու, տալ նորին սրբազնասուրբ կաթողիկոսին մերոյս բարեբարին և բազմերախտին, որ

ալն նորալ տրվելու երկու հազար ռուպլի փողն մեր ամենեցունցս պարտկն է, որ մեր խորհրդովն էրլիտ նա պարոն կլաւալ աղալ Կարապետ Օվանէսովն որ մեք ի ներքով ձեռագրեալքս մեր կամաւն գրել ետուք ձեռագիրս ալս և ի ներքոյ սորալ ստորագրեալ ետուք նմալ աղալ Կարապետ Օվանէսովին: Որ մեզ ընդունելի է»:

Նախիջևանում կաթուղիկոսը մնում է երկու շաբաթից աւելի և ճանապարհ է ընկնում դէպի Հաշտարխան, ուր և ժամանում է Սեպտեմբերի 12-ին: ²⁰⁾ Այդ երկու շաբաթուալ ժամանակամիջոցում երջանկալիշատակ կաթուղիկոսը, բացի Արամովին բարուպէս պատժելու գործից, որի մասին մենք անցեալ դիւնում լինեցինք, մի քանի ուրիշ կարգադրութիւններ էլ է անում, որոնք մի կողմից ցոյղ են տալիս ալն մեծ հոգացողութիւնը, որ հանգուցեալ արհին միշտ ունեցել է Նախիջևանի գաղթականների վերալ, միւս կողմից էլ ձգտումն ու ցանկութիւն վերջնականապէս կարգի դնելու իւր հիմնարկած քաղաքի գործերը. Այդ կարգադրութիւնների մէջ նամանաւանդ գրաւում են մեր ուշադրութիւնը երկուսը՝ Ս. Լուսաւորիչ աւագ եկեղեցու շինութեան գործը և 24 հոգաբարձուների կանոնադրութեան կամ «Դաշնադրութիւն միաբանութեան» թղթի վերահաստատութիւնը և բարեփոխութիւնը, որոնց մասին նա երկու կոնդակ է տալիս: Ս. Լուսաւորիչ եկեղեցին, որի քարէ շինութեան հիմքը շատ ժամանակ էր որ ձգուած էր քաղաքի մեծ հրապարակի մէջ, տակաւին չէր վերջացել մասամբ փողի սակաւութեան, մասամբ էլ սրբազա-

²⁰⁾ Պ. Աղէքսանդր Նրիցեանը իւր «Ամենալն Հալոց կաթուղիկոսութիւնը և Կովկասի Հալք XIX դարում» աշխատասիրութեան առաջին մասում խօսելով Յովսէփ կաթուղիկոսի ուղևորութեան մասին Պետերբուրգից Հաշտարխան, մի քանի տեղ չփոթում է ամսաթուերը: Նորա ասելով կաթուղիկոսն Օգոստոսի 4-ին դուրս է գալիս Պետերբուրգից, մօտ երեք շաբաթ մնում է Մոսկուալում և ժամանում է Հաշտարխան Սեպտեմբերի 12-ին, ուրեմն դուրս է գալիս, որ կաթուղիկոսը Օգոստոսի 25—26-ին է կարողանում միալն դուրս գալ Մոսկուալից: Ուն ինչ հանգուցեալ արհին Օգոստոսի 15-ին արդէն Նախիջևանումն է եղել և մնացել է ալնտեղ, գոնէ, մինչև Սեպտեմբերի 2-ը, ինչպէս ցոյց են տալիս Դումի երկրորդ նիստի արձանագրութիւնը և Նախիջևանում Օգոստոսի 26-ին և Սեպտեմբերի 1-ին տրուած կոնդակները, որոնք գրուած ու արձակուած են Նախիջևանում:

նի ալդ միջոցներում լաճախ քաղաքից բացակայելու պատճառով: Երջանկալիչապես կաթուղիկոսը ցանկանում էր մալրեկեղեցու շինութիւնը շուտով վերջացնել, որովհետեւ, նախ, դորա հետ կապ ունէր և միւս հոգեւոր հաստատութիւնների՝ առաջնորդարանի և հոգեւոր դատարանի շինութեան գործը, որ պէտք է սկսուէր նորա շինութեան աւարտելուց լետով նորա բակում, երկրորդ, նա դորանով կամենում էր շուտով առաջն առնել այն թեր ու դէմ խօսակցութիւնների, զրուցների և բամբասանքների, որ Արրահամեանք տարածում էին հասարակութեան մէջ նորա մասին: Եկեղեցու շինութեան կոնդակը, որ արձակուած է 1800 թուի օգոստոսի 26-ին, տրուած է պարոն Աստո ածատուրի, զլավալ պարոն Կարապետ Յովհաննիսեանի, պարոն Կարապետ Սահակեանի, պարոն Յարութիւն Տէր Մկրտչեանի, պարոն Յարութիւն Ղաթբանեանի և պարոն Յովհաննէս Սարգսեանի անունով, Կաթուղիկոսը դոցա լանձնելով եկեղեցու շինութեան աւարտելու գործը, մի քանի կարճուր կարգադրութիւններ էլ է անում: Նա հրամայում է նոցա մի առանձին մատեան կազմել և շինութեան բոլոր ծախսերը մանրամասնաբար գրել նորա մէջ, որպէս զի լետով հեշտ լինի իմանալ, թէ որքանով է զլուխ եկել բոլոր շինութիւնը: Նա լորդորում է նոցա աշխատել ալդ բարեպաշտութեան գործի համար և ուրիշներին ևս համոզել նուիրաբերութիւններ անել: Նա խոստանում է լանձնել նոցա իւր ձեռքում գտնուած վեց ոսկէ խաչերը և ալլ կոտրտուած արծաթեղէն, պատուիրելով հալել նոցա և ծախել և գուլացած փողը գործ դնել շինութեան վերալ, մինչև որ ինքը կարողանալ հաւաքել և հասցնել նոցա շինութիւնն աւարտելու համար հարկաւոր բոլոր փողը:

Դաշնադրութիւն միաբանութեան թուղթը, որ գրուած էր 1795 թուին և որի հիման վերալ կազմակերպուած էր քաղաքի տնտեսական կառավարութիւնը կամ «Քաղաքային Դուսը», ալդ ժամանակներում արդէն խանգարուել ու կորցրել էր իւր առաջուալ նշանակութիւնը: Դորա պատճառն էր, նախ, ալդ թղթի կամ կանոնադրութեան թերի ու անկատար լինելը, երկրորդ, Աբրամեանց խռովութիւնը: Մի քանի չար և պղտորիչ մարդիկ իւրեանց զլուխ ունենալով վերոյիշեալ Աբրամովին և օգտուելով սրբադանի բացակայութիւնից, պատրել էին պարզամիտներին և թիւրել էին նոցա ուղիղ ճանապարհ-

հից: Երջանկալիչատակ կաթողիկոսն ի նկատի առնելով քաղաքի տնտեսական կառավարութեան ալդպէս խանգարուելուց ապաղպում հալ հասարակութեան զլիւին գալիք պատահարները, կոնդակով 11 թողուածից բաղկացած մի նոր կանոնադրութիւն է տալիս նոցա, որ թէև ընդհանրապէս միևնոյն բնաւորութիւնն է կրում, ինչ որ 1795 թուականինը, բայց մասնաւորապէս շատ է զանազանուում նորանից: Արշնադրութեան թուղթը հոգաբարձուների թիւը սահմանում էր 24, նոր կանոնադրութիւնը նոցա թիւը հասցնում է 36-ի. դաշնադրութեան թուղթը Դումի նպատակը և հոգաբարձուների պաշտօնի որպիսութիւնն ընդհանուր խօսքերով էր որոշում, նոր կանոնադրութիւնը թէև աւելի հակիրճ կերպով է խօսում ալդ կէտի մասին, բայց աւելի ճշտութեամբ է որոշում Դումի և հոգաբարձուների ինչ լինելը. դաշնադրութեան թուղթը, բացի հոգաբարձուների ժողովներից, թող էր տալիս և հասարակութեան ժողովներ, նոր կանոնադրութիւնն ոչ միայն արգելում է հասարակութեան ժողովները, ալ և թող չէ տալիս մինչև անգամ մասնաւոր ժողովները. դաշնադրութեան թուղթն ընդհանուր կերպով էր որոշում Դումի իրաւասութեան պատկանելիք դործերը, նոր կանոնադրութիւնն ուղղակի մատնացուց է անում ալդ գործերի վերալ. դաշնադրութեան թուղթը գիւղացւոց ներկայացուցիչների Դումի նիստերին և հասարակութեան ժողովներին մասնակից լինելու մասին ամենևին չէր լիշում, նոր կանոնադրութիւնն ուղղակի չեղտում է, որ գիւղացւոց ներկայացուցիչներն էլ պէտք է մասնակցեն Դումի նիստերին, որովհետև նոքա էլ հալ հասարակութեան անդամները են. դաշնադրութեան թուղթը քաղաքի կարգերը խանգարողներին, անհնազանդներին և ապստամբներին հռչակում էր անբարիշտ և անօրէն և արտաքսում էր հասարակութիւնից, նոր կանոնադրութիւնն ալդ տեսակ անձնաւորութիւններին ուղղակի կամ տեղական ոստիկանութեան ձեռքն է լանձնում կամ նահանգական իշխանութեան տնօրէնութեան. դաշնադրութեան թուղթն ատենական օր Դումի նիստերի համար նշանակում էր շաբաթ օրերը, նոր կանոնադրութիւնը նոյն նպատակի համար սահմանում է ուրբաթ օրերը: Եւ առհասարակ հին կանոնադրութիւնն աւելի ներդաժիտ էր զէպլի քաղաքացիների և գիւղացիների թուլութիւնները ու պապսութիւնները և աւելի հասարակալին ու ժողովրդական հոգ-

ւով էր կազմուած, քան թէ նորը, որ աշխատում է սեղմել, կենդրոնացնել իշխանութիւնը և քաղաքի կառավարութիւնը մի քանիսնեւրի ձեռքում և լաճախեցնել ոստիկանութեան և նահանգական իշխանութեան միջամտութիւնը հասարակութեան ներքին գործերում:

Քաղաքի կառավարութեան ձևի և իշխանութեան այդ սեղմումն ու կենդրոնացումն հետեւեալ կերպով է արտապատուած նոր կանոնադրութեան մէջ. «Նախ՝ զի հոգաբարձութիւն ոչ ալ ինչ է եթէ ոչ վերակացութիւն հասարակութեան համայն ժողովրդեան քաղաքի իւրիք, որք գորովադութ խնամօք կառավարելով զժողովուրդսն, ի բաց վանել ի նոցանէ զամենայն ամբխական խռովութիւնս և արգելուլ զխառնիճաղանձս ի հաւաքմանէ զռեհչուկ ամբոխեաց սակս հասարակութեան խորհրդոց ինչ, ալ զպարտս նոցա ինքեանք ընկալեալ ի թիկունս իւրեանց ջանացոյս լինիցին պահել զնոսա ի խաղաղութեան և ի բարեկարգութեան, որպէս պքաղաքացիս. 2) Սոյն հոգաբարձուքս պարտաւորին ունել ի մէջ իւրեանց՝ զսէր կատարեալ՝ զճշմարիտ խաղաղութիւն և զմիաբանութիւն, որով լինել հալը և ալցելու քաղաքին, աչք կուրաց, ոտք կաղաց, միտքարութիւն բովանդակ ժողովրդեան. 3) Ունել զհաւատարմութիւն առ Աթոռն ամէնաողորմած Մեծի Կալսերն Մերոյ և Թագաւորի, և զանձինս ձեր՝ զոհ առնել ի վերայ նորին ըստ քրիստոնէական պարտաւորութեան և երդման ձերոյ, ոչ միայն ի քաղաքիս այսմիկ և ի մէջ Թագաւորութեանցս, ալ և արտաքոյ լալսմտէրութեանէ լամենայն ուրեք. 4) Պատուիրեալ սաստկապէս՝ ի զալֆախանայսն, մի երբէք խօսել ի վերայ Թագաւորութեան և հասարակութեան բանն, զի մի անդգուշ անձանց և տգիտաց՝ լառաջասցի արատիք ինչ քաղաքիս, որոյ վասն սուր մեծ զոյ ի Թագաւորէն, չաղազս ալսպիսեացն. 5) Արգելուլ զհասարակութիւն ի լանկարդ ժողովոց և ի հաւաքմանէ, զի մի տգեղութիւն ինչ և ընկումն անուան պատանեացի ի նոցանէ ալսմ քաղաքի որպէս ուսուսցեն նոցա չարքն, որով վասն կրեցիք դուք լոյժ, զի ի խառնիճաղանձ ամբոխից բարի ինչ ոչ լառաջանալ և օրէնքն կալսերական՝ զնոսա արգելու: Ալ եթէ սակս հասարակութեան օգտի և հարկաւորութեան խորհուրդ ինչ հարկաւորիցի բաւական են ալսոքիկ երեսուն և վեց անձինքս՝ որք երդմամբ ընտրեալք են ի հոգաբարձութիւն հասարակութեան

ձերոյ, եւ եթէ արնպէս խորհուրդ լինիցի որ պատկանիցի և գիւղացւոցն, լաւնժամ հարկաւորի գլաւալն, կոչել ի նոցանէ և զօմանս ի խորհուրդ, լամենալն գիւղիցն մի անձն և կամ եթէ նոքա հաճեսցին՝ զմի ոք նշանակել լատկացուցանել վասն խորհրդոց ի կողմանէ գիւղացւոցն, զի և նոքա անդամք են հասարակութեան ձերոյ՝ հարկ է զնոսա ոչ որոշել ի միաբանական խորհրդոց, զի շահեսցի ի մէջ ձեր, սէր և միաբանութիւն, իբրև զմի հասարակութիւն, ոչ արհամարհել զնոսա որպէս զգիւղացիս, ալ պատուեալ որպէս զանդամս ալսմ հասարակութեան. 6) Արտաքոյ ալսմ որ ինչ ժողով լինիցի ի տունս ի խանութս և ի դալֆախանալս և ի հրապարակս ուր արդելեալ են օրինօք, հրամալի ի Մաղիստրաթէն պօլիցին ըմբռնել զխռովիչսն և հրապարակաւ պատժել, և եթէ Ատօմճանաւոր ոք իցէ ի մէջ նոցա, արտաքսել ի հասարակութեանէ որպէս հատեալ անդամ և զրել ի գուրէնական կառավարութիւն պատժել զհարաճճիկն ալն, որպէս զպղտորիչ տէրունի ժողովրդեանս ալսմիկ. 7) Յամենալն ուրբաթու ժողովեալ ալն ընտրեալ անձանցս ի Մաղիստրաթէն, ի լութ ժամէն մինչև ցտանս և երկու ժամն ընդ գլաւալին և դատաւորացն, ի միասին խորհլ վասն հարկաւորութեանց հասարակութեանցն շահաւէտութեանցն և արդիւնաւորութեանցն քաղաքիս խօսել ի վերալ վաճառականութեան գործոց. գլտեւ և քննել թէ լորում քաղաքի ինչ ապրանք վաճառի և որպիսի ապրանք կարէ արդիւնաւորել զքաղաքն, և լետ խորհելոյ զկերպն վաճառականութեան ծովու և ցամաքի. ապա ընթեռնուլ տալ զկաղէթս՝ և լսել թէ ի լոր աշխարհի ինչ ներգործի կռիւ կամ հաշտութիւն և կամ վաճառականութիւն, զի զօրութիւն կաղէթին մեծապէս սրէ զմիտս վաճառականաց ձերոց, և մերձեցուցանէ զձեզ ի ծանօթութիւն և ի գիտութիւնս ալ աշխարհաց և վաճառականաց, քան զոր չիք ինչ ըղձալի մարդկալին մտաց, քան լսել զնորագոյն ինչ. 8) Պարտաւորութիւն է՝ գլաւալին, դատաւորացն և հոգաբարձուացն, զորք մանկունս ընկալնուլ ի գթութիւնս իւրեանց. և զկալս նոցա պահպանել ի լափշտակողաց զմանուկն տալ բարի անձանց սնուցանել զնոսա խրատիւք և ուսմամբ և զկալս մնացեալս ի ծնողաց նոցին, լանձնել հաւատարիմ առն, զգուշութեամբ պահպանել մինչև ի զարգացումն որբին ալնմիկ, ապա թէ ի կատարեալ հասակի լանձնել նմա, և զնա առնել պիտանի անդամ հա-

սարակութեան, օրհնեալ է հոգաբարձուն արն՝ որ գորովա-
գլխութեամբ՝ ընկալնու զորքս, և ծնողական պարտաւորութիւն
ի վերալ ընկալնու, որպէս զի կարիցէ որբ մանուկն արն ա-
սել հալր իմ և մայր իմ թողին զիս. իսկ հոգաբարձուքս ալ-
սոքիկ՝ Աստուծոյ, նմանեալ ընկալան զիս. Եւ զինչս նոցա
պահպանել ի ցեցոյ ի փտութենէ և ի փանկէ, շարժականքն
միշտ կարեն ծախել հոգաբարձուքն, իսկ անշարժքն անծախք
են մինչև ի դարգացումն կատարեալ հասակի որբին արնմիկ.
9) Գանձապետացն աղքատաց՝ լամենարն ամի սոքա վերահասու
լինիցին պահպանել և կամ աղքատացն մատակարարել զար-
դիւնս նոցին ընդ հոգևոր դատաւորացն. 10) Սոքա լինիցին
վրէժխնդիր արնոցիկ՝ որք հալրոյեսցեն զսուրբ հաւատն քրիս-
տոնէական, զթագաւորս՝ զՀալրապետս՝ զեպիսկոպոսունս՝
զքահանայս և զխորհուրդ եկեղեցւոյս. և մինչ արսպիսի մեղք
քրէականք են և անթողլիք, զլաւարն պարտաւորի ի գուպեւ-
նական կառավարութիւն ծանուցանել և նովալ պատժել զմե-
ղաւորն. 11) Զգոյշ լինիցիք ի պահպանել զգետինս շնորհե-
ցեալս Մեղ ի Ամէնողորմած թագաւորէն թարց զլաւարի և
մաղիստրաթի զիտութեան մի ոք համարձակեսցի ինքն տիրել
և կամ ալոց տալ. որպէս լառաջ առնէին, ալ արն ամենարն
կախի ի բարեկարգութենէ վերոյ անձանցն և ուր պատշաճ
տեղիք դտանիցին արգեաց, բաժանեսցեն արնց՝ որք ունեն
զհաճութիւն զարգիս և զտունկս անցցուցանելոյ:

Ամեն բանից երևում է, որ արն կանոնները լուսահոգի
հալրապետը գրել է Աբրահամեանց խռովութիւնների աղղե-
ցութեան ներքոյ. Նա ինչպէս երևում է, կարծել է, որ հին
կանոններն իւրեանց ներողամիտ հոգւով և աղատամիտ ուղ-
ղութեամբ եթէ խռովութիւններ թուն պատճառը չին եղել,
գոնէ, շատ նպաստել են նոցա զարդանալուն և լարն ծաւալ
ստանալուն, ուստի և նա մտածել է իւր նոր կանոններով
ապագայում պատահելիք դոյնանման խռովութիւնների առաջն
առնել. Նա արգելել է հասարակութեան ժողովները և իշխա-
նութիւնը կենդրոնացրել է քչերի ձեռքում, որովհետև հասա-
րակութեան ժողովներին մասնակցող խառնիճաղանձ ամբոխն
ենթարկուելով Աբրամովի և Դերիջանեանի պէս չար և իւ-
րեանց անձնական շահերին հետևող անձնաւորութիւնների աղ-
ղեցութեան, աղմուկ, խռովութիւն ու շփոթ է հանում եղել.
Նա արգելել է տներում գումարուող մասնաւոր ժողովները,

որովհետև արդպիսի ժողովներում են լաճախակի խմբագրում ու կաղմուտ հղել զանազան կեղծ ու պատիր խնդրագրեր քարձարդոյն իշխանութեան անունով, ինչպէս որ դորանից առաջ Արքամովի տանը խմբագրուել էր Դերիշանեանի քսութեան թուղթը. նա թուլ չէ տուել հրապարակներում, խանութներում և սրճարաններում լաճախակի տեղի ունեցող «հաւաքումը», որովհետև հէնց արդ տեսակ հաւաքումն քննուելու էին կաղմուտ զանազան աննշան մարդկանց իբր թէ գործած հասարակօրէւտ սխրագործութիւնները ջատագովութեան թղթերը, որոնցից մի երկու օրինակ ներկայացրել էր իշխանութեան Դերիշանեանը. վերջապէս, նա պատուիրել է պղտորիչ, խռովարար և չարածճիկ մարդկանց արտաքսել հասարակութիւնից, հրապարակաւ պատժել կամ նահանգական իշխանութեան ձեռքը լանձնել, որովհետև տեսնում է եղել, որ քաղաքի մէջ մինչև արդ ժամանակներն եղած բոլոր խռովութիւնները պատճառը հէնց արդ կարգի մարդիկն են եղել:

Որ նոր կանոնները կաթողիկոսը գրել է Արքահամեաց խռովութիւնների ազդեցութեան ներքոյ,— դորանում կասկած չի եղել չի կարող. Դորան ուղղակի ապացոյց կարող են լինել բացի կանոնների ընդհանուր հոգուց, և այն ակներև ակնարկները և աշխարհ մատնացուցումները, որոնց մենք պատահում ենք թէ կանոնների լաւաջաքանում և թէ տեղ-տեղ նոյն իսկ չօղաւածների մէջ. «Ծանուցումն լիցի Նախիջևանի սրտադիր և սիրելի ժողովրդեանդ իմոյ, ասուած է լաւաջաքանում, զի սահմանեմ զսոյն կանօն հոգաբարձութեան որ է քաղաքական տնտեսութիւն. Ոչ իբրև պակասաւորք սոյնոյ բարեխնամատարական տնտեսութեանց, այլ զ1795 ամի կանոնեցելոցն իմոց նուիրեմ զվերանորոգութիւն և զհաստատութիւն, զոր ի սակաւիկ ինչ հեռանալն իմ ի ձէնջ ըստ կալսերական բարձրագոյն հրամանի, լարեան ի մէջ ձեր արք չարք և պղտորիչք, որք զպարզամիտս պատրեալ, առ լորսալոյ զաղահութիւն և զփառս վասն ինքեանց, թիւրեցին զձեզ ի լուղիղ կանոնաց և ի բարի սահմանադրութեանց, որք սահմանեցեալք էին Մեծ ըստ ձերդ հաճութեան և խնդրոյ. իսկ ալժմ այն ամենայն կանօնք ոչ երևին ի մէջ ձեր զի չարքն անհետս են աւարեալ գրարի սերմունսն մեր, զի զորոմս ապականիչս ընդարձակ սերմանել մարթասցին ի սիրտս պարզամիտ ժողովրդեանդ իմոյ. Բայց Աստուած՝ որ սրտագէտ է ամենայնի և

Մարդասէր, եզիտ զսիրտս բազմուց անմոլարս և ճշ երկրպա-
զանօդս դիցն անօրինեցելոցն, շարժեաց զսիրտ Ամենաբարե-
պաշտութեամբ և Արդարադատութեամբ լցեալ Օգոստաիառ-
Մեծի կալսերն Պօղոսի, կործանեաց զբաղինս. կռոց նոցա, և
դշար խորհուրդս նոցին՝ եղծեալ քակեաց. արդարութեամբ պատ-
ժելով և դատապարտելով զնոսա: Ուստի՝ իբրև զալիս ծովու
վրդովեալ քաղաքս մեր, խաղաղացուցեալ եթող ախուհետև
զգաստանալ և լինել որդիք Աստուծոյ խաղաղութեամբ և բա-
րեպաշտութեամբ, և հաւատարիմ հպատակք կալսերութեանս
խորադոյն հպատակութեամբ և օրինացն նօրին պահպանու-
թեամբ: Արդ՝ եկեալ իմ ալժմ ի քաղաքս մայ լԱստուածապահ,
գտի զամենեսեանսդ համեմատ կամաց նորին կալսերական
մեծութեան, և ի բազմավաստակ Քահանայապետիս ձերոյ:
Վասնորո՞ գթութեամբ իջեալ ի խնդիր և լաղաչանս ձերոյ
հասարակութեան, վերանորոգեմ զկանօն հոգաբարձութեան և
տնտեսութեան որ ըստ դօրութեան կալսերական շնորհեցեալ
Պրվէլէկին կարողասիք վարել ըստ հնադոյն բարւոք կանօ-
նաց ծիսի և սովորութեան Ազգի և ժողովրդեան մերոյ կեր-
պաւորելով երկրիս կալսերական օրինաց և կանօնաց: Եւ ըստ
ալժմ ընտրեալ եղեն ի ձէնջ արք բարիք թուով՝ 36, զորս
երդուեցուցեալ խաչիւ և սուրբ Աւետարանաւ, անուանեցաք
զնոսա զամենեսեան Հոգաբարձուս Նախիջնանու քաղաքիսս:

ԳԼՈՒԽ Է.

Նոր կանոնների մէջ առանձին կերպով շեշտուած են
նախաձեռնող նոցա երեք կէտերը, որոնց մասին հին կանոն-
ները կամ բնաւ չեն խօսում, կամ հարեանցի են անցնում:
Դոքա կալսերական օրինաց հնազանդութեան, գիւղացուց իրա-
ւունքների պաշտպանութեան և կալսերաշնորհ հոգերի սեփա-
կանութեան պահպանութեան և շահաւէտ գործածութեան կէ-
տերն են: Յալունի է, որ Յովսէփ սրբազանը իւր առաջնոր-
դութեան հէնց առաջին օրից հոգւով ու սրտով կապւում էր
առասաց արքունիքի հետ և իւր սրտի բոլոր համոզմունքով
սկսում է սիրել ու լարգել մեծ թագուհուն և նորա լաջորդ-
երջանակալի: ատակ Պօղոս կալսեր. նա հէնց սկզբից համո-
զուած է լինում, որ տառապեալ հալ ժողովուրդը կարող է
միայն հանգիստ գտնել Ռուսաց ինքնակալների հզօր գալիսօ-

նի հովանաւորութեան ներքոյ, ուստի և նա ոչ միայն իւր բոլոր գործողութիւնները համաձայնեցնում է իւր ալս ճերքին համոզմունքին, այլ և թէ գրով և թէ խօսքով աշխատում է ալդ իւր համոզմունքը ներշնչել իւր առաջնորդութեան տակ գտնուած ժողովրդի սրտի մէջ: Մեր ձեռքին գտնուում է սրբազանի իւր հօտին ուղղած առաջնորդական անդրանիկ շրջաբերականը, որ արնպիսի զեղուն ու թաթախուն զգացմունքով է աւելցուած դէպի կայսերունհին, Ռուսաց տէրութիւնը սիրելու և նորա ինքնակալներին լարգելու արնպիսի անկեղծ ու սրտանց խրատներ և լորդորներ է պարունակում իւր մէջ, որ, կարծես, այլ ևս ոչ մի կասկածի տեղ չէ մնում նորա չափազանց երախտագիտութեան, սիրոյ դէպի կայսերակէն տունն ընդհանրապէս և դէպի կառավարող կայսրը մասնաւորապէս: ²¹⁾ Սակայն Աբրահամեանք, որոնք իւրեանց նպա-

²¹⁾ Յովսէփ սրբազանի ալդ անդրանիկ շրջաբերականը մեծազիր թերթի վերայ գրած մի կոնդակաձև գրութիւն է. նա տուած է Նախիջևանի լաշորդ կարապետ վարդապետի անունով Պետերբուրգում 1798 թուի Սարտի 25-ին և իւր ճակատին կրում է սրբազանի կայսերաշնորհ ընծաների նկարներով դրոշմուած եպիսկոպոսական կնիքը, որի տակ կիսաբոլոր ձևով գրուած է՝ «կնիք Յովսէփայ արքեպիսկոպոսի հալոց ընկալեալ զպարգևս ի կայսերունհին ամենայն ռուսաց, 1793»։ Շրջաբերականի մէջ հանգուցեալ սրբազանը հանգամանօրէն խօսելով Հայերի կրած նեղութիւնների մասին, նմանեցնելով նոցա դրութիւնը Բաբելոնի Հրէից գերութեան և Ռուսաց ինքնակալներին Հալոց աղատիչ և մի նոր կիւրոս ներկայացնելով, կանգ է առնում երջանկալիատակ Սկարաբինէ կայսերուն Սիմէօն կաթողիկոսին շնորհած բարձրագոյն հրովարտակի և ընծաների վրայ, ինքը կայսերական մաղթանքի համար գրուած աղօթքի խօսքերով բարեմաղթութիւններ է տնում և հրաւիրում է իւր հօտին նոյնը անել ամբողջ կայսերական տան համար: «Ժամ է մեզ ահա, ասուած է կոնդակի վերջում, փոխարինել՝ անչափ և անհասանելի ալսմիկ գթութեան կայսերն մերում Մեծի և Ամենագթածի, բաց զինչ տացութ և կարողալով՝ զնա որ ամենակարողն է՝ կոչեցուց ի փոխարինել՝ ասելով թէ՝ որ ի բարձրութենէ գահովիցն իւրոց զիջեալ»՝ զանկեալսս կանգնեաց՝ և զխոնարհեալսս բարձրացուց ևս դու ի Աստուածալին Աթոռոյ քումմէ, և զկանգուն և ըզբարձր զԱթոռ թագաւորութեան կայսերն մերոյ, բարձրագոյն և հաստատուն արասցես, որ զտրտմեալ սիրտ ալդի մերոյ մխիթարեաց՝ սրբելով զարտասուս ի դիմաց մերոց, մխիթար

տակներին հասնելու համար միջոցների խտրութիւն չէին առնում, աշխատել էին առաջնորդի մինչև անգամ և այդ զգացմունքը և ուղղութիւնը տէրութեան աչքին կասկածաւոր երևեցնելու նոքա չափաւանդով, որ իւրեանց քսութեան թղթի մէջ գող էին դուրս բերել¹ նորան, այլ և ճշնել էին հաստատել, որ նա օրինադանց է, որովհետև² ծածկաբար անցաթըղթեր է տուել Ղաիմ փախչող Հալեւրին, և ապստամբ է, որովհետև չէ ընդունել 1785 թուին հրատարակուած քաղաքալին դումի կալսերական կանոնադրութիւնը: Արքեպիսկոպոսը, որ «Դաշնադրութեան թղթի» մէջ էլ չէր մոռացել պատուիրել իւր սիրեցեալ հօտին սիրել և հաւատարմութեամբ ծառայել ամենաողորմած թագուհուն և հնազանդել նորա տուած փրկարար օրէնքներին, այժմ նոր կանոններում առանձին կերպով շեշտում է այդ կէտը, կամենալով դորանով խսպառ կարկել իւր թշնամիների բերանը և մի անգամէլ բարձրաբարբառ վկայել իւր դէպի կալսերական տունը ունեցած հաւատարմութիւնը:

Գիւղացիք, ինչպէս³ մանք տեսանք Մաղխտրատի կաղմակերպութիւնից, սկզբում քաղաքացւոց հետ միասին կազմում էին մի հալկական շրջան և մի հաւարակութիւն: Նոքա էլ

պահեսցես զսիրտ նորին Ամենագթած՝ երկարութեամբ կենաց իւրոց, և իւրն կալսերական սերնդոց՝ որ զհաւատս մեր յարդեաց՝ լալցելանելով եկեղեցեաց մերոց, և կախելով զբարեկարգութիւն նոցա ի կամաց և ի Տնօրէնութենէ սրբազան վեհապետին և մեր, որ զլուս մեր հաստատեաց բարձրադուն Հրովարտական շնորհեցելով սրբով Աթոռոյն՝ և լալտնելով զալն ի վիճակի իւրում զաւառապետաց իւրոց և կուսակալաց, և որ զսէր իւր առ մեզ աճեցոյց կալսերական ձրիւք իւրովք, ընդ հաւատոյն յարգութեան՝ Հալրդ երկնաւոր զօրհնեալ գլուխ նորին օրհնեսցես, ընդ լուսոյն հաստատելով՝ որդիդ միածին քանդ Աստուած՝ զսերունդ նորա կալսերական և զաղդ ընտանիս նորա օրհնեսցես, և ընդ սիրոյն ձրիւքն ցուցելով, Հոգիդ սուրբ ճշմարիտ՝ զկալուած նորա և զժառանգութիւն թագաւորութեան օրհնեսցես՝ լաղզաց լաղզս՝ և լորդոց լորդիս՝ մինչև ի կատարած աշխարհիս պատուիրեմք հաւ որդւոցդ մերոց և սիրելեաց՝ ընդ ընկալնուլն զայս թուղթ՝ օրհնութեան ժողովեսցիք ի տաճար Տեառն Աստուծոյ և զկնի Աստուածալին պատարագին՝ ընթեռնելով զՀրովարտակն բարձրագոյն նորին Մեծութեանն հալերէն և ռուսերէն և զօրինակն ևս գրեցելոց հրամանացն, որ առ կուսակալան տէրութեան իւրոյ, կատարեսցիք ապալ՝ զմաղթանս Աստուածահանդէսս ըստ ծիսի, և զխնդրուածս Աստուածահալցես... և ալն:

կառավարութեան գործերի մէջ նոյնքան մասն ունէին, որքան
և քաղաքացիք, նոքա էլ մասնակցում էին հասարակաց ժողով-
ներին, նոքա էլ իրաւունքի տէր էին և ձայն ունէին, Սակայն
ժամանակի ընթացքում քաղաքացիք ամեն բան իւրեանց
ձեռքն են հաւաքում և սկսում են բռնաբարել գիւղացւոց ի-
րաւունքները, ըստ քմաց, հրաւիրելով կամ չհրաւիրելով նո-
ցա ժողովներին, որից և գիւղերի ու քաղաքի մէջ մի տեսակ
սառնութիւն է ընկնում: Սրբազանը, որ Վաշնադրութեան
թղթի մէջ ի նկատի չէր առել ալդ հանգամանքը, տեսնելով,
որ ալդ սառնութիւնը դնալով աւելանում է, և գուշակելով,
որ ապագայում դորանից շատ շեշտակար բաներ կարող են
ծագել, իւր նոր կանոնների մէջ անհրաժեշտ է համարում չեշ-
տելով լիւել, որ գիւղացիք էլ պէտք է մասնակցեն Վումի
նիստերին, որովհետեւ նոքա էլ հասարակութեան անդամ են:
Արժանի է ուշադրութեան արն հանգամանքը, որ սրբազանն
իւր ալդ կարգադրութեամբ կամեցել է երկու նպատակի հաս-
նել՝ նախ, պաշտպանել գիւղացւոց իրաւունքները և նոցա ու
քաղաքացւոց մէջ երևեցած սառնութեան առաջն առնել, երկ-
րորդ, միջոց տալ գիւղացիներին շահուել քաղաքացիների
խրատներից և խորհուրդներից. Վժբադրաբար սրբազանի ալդ
երկու ակնկալութիւնը ևս չեն իրագործուում. քաղաքացիք
լամառում են իւրեանց գոռոգութեան մէջ և սառնութիւնը
հետզհետէ խոր արմատ բռնելով, փոխուում է ատելութեան
ու թշնամութեան: Յետագայ հանգամանքները չեն նպաստում
ալդ գծողութեան ու ատելութեան պակասելուն կամ նուազե-
լուն. ընդհակառակն առաջ են գալիս նոր, դուռ շինական և
քաղաքային շահեր, մէկզմէկու իրաւունքների բռնաբարու-
թեան դէպքեր, որոնք կամաց կամաց գործն արն տեղն են
հասցնում, որ հալ հասարակութիւնը պառակտուում է երկու
թշնամական բանակի՝ գիւղացւոց և քաղաքացւոց: Քաղաքի
աղայական դասակարգը, որ լետագայ ժամանակներում հալ
հասարակութեան կառավարութեան բոլոր գործերն իւր ձեռքն
է ձգում, բացի նորանից, որ հեռացնում է գիւղացիներին
կառավարութեան գործերից, ալ և սկսում է նոցա վերալ նա-
խել արհամարհական աչքով ճիշտ արնպէս, ինչպէս մի ժամա-
նակ հալ սեպուհներն ու նախարարները նախելիս են եղել իւ-
րեանց կալուածներում ապրող գիւղացիների վերալ: Աղանե-
րի ալդ հալեացքը կամաց կամաց ընդհանրանալով, տարած-

ւում է և բոլոր քաղաքացիներին մէջ, առաջ բերելով մինչե-
ցալժամ դեռ գիւղացիների վերաբերութեամբ գործածուող սմո-
քոց և իւրոտ զլուխ մակդիրները, որոնք բացի նորանից,
որ բնորոշում են գիւղացւոց անտաշ լինելը և գլուխները իւղ
քսելու սովորութիւն ունենալը, այլ և մի տեսակ արհամար-
հական նշանակութիւն էլ ունին: Գիւղացիներն էլ լանձնուած
լինելով իւրեանց բաղդին, չունենալով առաջնորդող ուժ,
զրկուած լինելով հալ հասարակութեան շահերի չարն ու բա-
րին ճանաչելու ամենատարրական հասկացողութիւնից, սնուում
ու մեծանում են կոշտ, կոպիտ, բիրտ կեանքի մէջ: Նոցա մէջ
հետզհետէ արմատանում է այն համոզմունքը, որ քաղաքացիք
թշնամի են իրանց, որ ինքեանք նոցանից իւրեանց համար
լաւ բան չպէտք է սպասեն: Դորտ հետեանքը լինում է այն
որ նոքա սկսում են ամեն բանում քաղաքացիներին հակա-
ռակ գործել, որով և, լալտնի բան է, անդիտակցաբար մեա-
սում են հալ հասարակութեան ընդհանուր շահերին... Ի՞նչ
քանի գոյութիւն են ունենում Հայոց արտօնութիւններն ալդ-
երկու հակառակ բանակի անտոգոնիզմն այնքան աչքի չէ ընկ-
նում, որովհետեւ նոքա կապուած լինելով արտօնութիւններով,
ստիպուած են լինում կամալ-ակամալ գործել միասին, բայց
երբ որ նոքա վերջանում են և նոցա փոխանակում են տէ-
րութեան ընդհանուր կարդերն ու օրէնքները, ալդ անտոգո-
նիզմն երեան է գալիս իւր բոլոր զօրութեամբ: Առաջ է գա-
լիս, օրինակի համար, «գեմատվօների» խնդիրը և քաղաքա-
ցիք կառնում են և լոյս են ունենում իրաւունք ստանալ
Նախիջևանից և նորա հալ գիւղերից բաղկացած մի առանձին
«գեմատվօ» ունենալ: Գիւղացիք, փոխանակ ինքեանք ևս իւ-
րեանց կողմից նպաստելու ալդ գործին, անտարբեր են մնում,
կամ, լաւ է ասել, կամք չեն տալիս, և ստիպուած են լինում
լալտնի բան է, միանալ զրացի գեմատվօին: Հրատարակում է
ընդհանուր զինուորագրութեան կանոնադրութիւնը և Նախի-
ջևանից ու նորա հալ գիւղերից, իշխանութեան կարգադրու-
թեամբ, կազմուում է մի զինուորագրութեան շրջան: Գիւղացիք
անբաւական են մնում դորանից և հակումն են ցոյց տալիս
բաժանուել Նախիջևանից և միանալ Ռաստովի զինուորա-
գրութեան շրջանին, պատճառ բերելով, որ քաղաքացիք գա-
նադան միջոցներով աշխատում են ազատել իւրեանց օրդին-

դին ղինուորութիւնից, և ինքեանք ստիպուած են լինում նոցա տեղը ղինուոր գնալ, և ալլն և ալլն:

Յալտնի է, որ քաղաքին 1779 թուականի բարձրագոյն հրովարտակով շնորհուած էր 12 հազար օրավար հող: Այդ հողի վերաբերութեամբ հէնց սկզբից առաջ են գալիս երեք խնդիր՝ հողերի մի մասի փոխելու և նոցա քանակութիւնն աւելացնելու խնդիր, հողերի տեղական իշխանութեան ձեռնմխութիւններից պաշտպանելու խնդիր և, վերջապէս, նոցա շահաւէտ գործածութեան խնդիր: Հողերի մի մասի փոխելու և նոցա քանակութիւնն աւելացնելու խնդիրն առաջ էր եկել ալն հանդամանքից, որ շնորհուած հողերի մի մասը բուրովին անպէտք էր վարուցանքի համար: Գաղթականները դեռ 1780 թուին, ինչպէս մենք ալ տեսանք, ալ թուին առաջնորդի Պետերբուրգից նոցա գրած թղթից, խնդրել էին և խոստումն էին առել Պատեօմկինից, որ Նախիջևանի հողերին կից գտնուած գետինը՝ շնորհուի նոցա, 1787 թուին կալսերուհու Ղաիմի ճանապարհորդութեան ժամանակ նոքա նորից իւրեանց ներկալացուցիչ մահտեսի պարոն Աստուածատրի և առաջնորդի բերանով վերանորոգել էին Կրեմէնչուկում իւրեանց խնդիրը նոյն բանի մասին իշխան Պատեօմկինի առաջ. նոյն նպատակով առաջնորդը 1791 թուին առաջ պատգամաւոր էր գնացել Օչակով պալժառափալ իշխանի մօտ և լետով ճանապարհ էր ընկել Պետերբուրգ և ամբողջ հալ հաստրակութեան կողմից աղերսագիր էր մատուցել տէրո թեան իշխան Պատեօմկինի անունով: Այդ բոլոր աղերսագրերի, խնդրագրերի և պատգամաւորութիւնների հետեանքը, վերջ ի վերջոյ, եղել էր ալն, որ բարձրագոյն հրաման էր հրատարակուել և կատարուել էր գաղթականների երկու ցանկութիւնը՝ ընծալուել էր նոցա 213,162 ռուբլի 58 կոպէկ ապառիկ գումարը և շնորհուել էր նոցա ցանկացած գետինը, որով և քաղաքի հողերի քանակութիւնը 12 հազարից բարձրանալով, հասել էր 20 հազար օրավարի ²¹⁾: Հողերի տեղական իշխա-

²¹⁾ Այդ բարձրագոյն հրամանը մենք չկարողացանք գտնել. նորա մասին մենք տեղեկութիւն ունինք Դերիշանեանի քրութեան գործի դատաստանական քննութիւնից, Դատաստանի քննութեան 7 յօդուածում ասուած է՝ «Дано было архіепископу не одиннадцать, но десять тысячъ рублей, на проѣздъ въ Очаковъ къ покойному князю Потемкину, для испроше-

նութեան ձեռնմխութիւններից պաշտպանելու խնդիրը առաջ էր եկել ալն հանդամանքից, որ տեղական իշխանութիւնն ի նկատի չառնելով բարձրագոյն հրովարտակով Հալերին շնորհած արտօնութիւնները, ի միջի պլոց, ձեռնամուխ էր եղել և նոցա հողերին: Յայտնի է, որ առաջնորդը դեռ 1793 թուին բողոքել էր ալդ մասին և ձերակուտից հրաման էր բերել տուել՝ չկաշել դաղթականների հողերին: Բայց, ի հարկէ, ալդ բաւական չէր եղել. պէտք էր եղել անընդհատ հսկողութիւն ունենալ, որ հողերը, ժողովրդի հարստութեան ալդ ամենամեծ աղբիւրը սորա-նորա ձեռքը չանցնէին, ահա ձեռնմխելի և անաղարտ մնալին իբրև հասարակութեան կալուած ու սեփականութիւն: Վերջապէս, հողերի շահաւէտ գործածութեան խնդիրն առաջ էր եկել ալն հանդամանքից, որ հողերը շնորհուած էին Հալերին երկու նպատակով՝ մէկ, որ նոցանով նոքա ապահովուած լինին, երկրորդ, որ նոքա նոցա վերադ մշակին հասարակօրոտ բոյսեր՝ քնջիթ, խաղող, թխենի և շերամապահութեան սկիզբը դնեն, ալն ինչ մի քանի կարող մարդկ սովորութիւն էին արել իւրեանց սեփականացնել հողերի դաշնազան մասերը, գործածելով նոցա իւրեանց մասնաւոր շա-

нія ходатаиства его въ покойней Государыни Императрицы о прощениі помянутой недоимки, въ перемѣнѣ неудобной земли, коей объ отводѣ и остановкѣ взысканія были княжія предписанія, а потомъ послѣдовало всемілостивѣйшее прощениѣ въ денгахъ и удовлетвореніе въ землѣхъ. Աւելացրած հողի քանակութիւնը և տեղը ճշտութեամբ որոշուած են ալն աղերսագրի մէջ, որ սրբազանը 91 թուին Պետրբուրգում ներկայացրել է Պատեմկինին: Նորա մէջ սրբազանը 243,162 գուրի տպագրիկ գումարը ժողովրդին ընծաւելու պատճառաբանութիւնը բերելուց և խնդրելուց լետո, ասում է՝ «Они же, аиже, քն Հալերը, просятъ о перемѣнѣ состоящей въ ихъ владѣніи земли которая отведена имъ по обѣимъ сторонамъ Дона и на лежащей противу Нахичевана сторонѣ со всемъ неудобна и безполезна. А по сему сія земля соединяется съ землями донскихъ козаковъ то и отдають оную имъ, а на место его просятъ прибавить въ состоящей уже на нахичеванской сторонѣ въ ихъ владѣніи до речки мокраго чалтыря: Еще отъ селенія ихъ несветай по речкамъ Тузлему, савбену а отъ устья оной по дону до самаго мокраго чалтыря гдѣ сей впадаетъ въ Донъ и гдѣ есть ихъ земли нынешній рубежъ».

հերի համար և մոռանալով հասարակաց օգուտները: Աբրամովը, օրինակի համար, բռնել էր Սամբէկ գետի մօտ գտնուած հասարակաց ամենալաւ տեղերից մէկը և վերան չորս տնակ շինելով և ճորտեր բնակեցնելով, սկսել էր վարել ու փչացնել արօտատեղիները: Եւ երբոր հասարակութիւնն արգելել էր, նա շերամապահութեան տեսչին բարձրագոյն աշունով խընդիր էր ներկայացրել, ասելով, թէ ինքը կամենում է շերամապահութեամբ պարապել, բայց հասարակութիւնը, որ շատ աւելորդ հող ունի, տեղ չէ տալիս, արգելում է: Աբրամովի օրինակին հետեւել էր և նորա կուսակից նահապետ Պոպովը կամ Արչակովը, նոյն կեղծ նպատակով Տեմերնիկ գետի ափին գտնուած գետինը խնդրելով, և ալլն և ալլն: Յովսէփ սրբազանը, որ շատ տանջանք ու չարչարանք էր կրել, մինչև որ կարողացել էր ձեռք բերել հողեր, աւելացնել նոցա քանակութիւնը, պաշտպանել նոցա տեղական իշխանութեան ձեռնմխութիւններից և իւրեանց նպատակին ծառայեցնել նոցա, չէր կարող ի հարկէ, հոգ չտանել նոցա ապագայում ևս ապահովեցնելու համար: Եւ դեռ իւր դաշնադրութեան թղթի մէջ երկու լօղուած էր նուիրել հողերի մատակարարութեան խընդրին և 'Ղումի տնօրէնութեան տակ դնելով նորան, մի տեսակ կարգ ու կանոնի տակ էր ձգել: Այժմ էլ իւր նոր կանոնների մէջ երջանկալիշատակ արհին աչքի առաջ ունենալով Աբրամովի և նորա հետևողների չար օրինակը, անհրաժեշտ է համարում նորից լիշել ալղ խնդրի մօտին և առանձին կերպով շեշտել հողերի պաշտպանութեան և նոցա չահաւէտ դործածութեան կէտի վերալ:

Նոր կանոնները ևս դաշնադրութեան թղթի պէս իւրեանց ամբողջութեամբ մի մշակուած, հաստատուն կանոնադրութիւն չեն լինում ալ միայն կանոնադրութեան նախագիծ: Երջանկալիշատակ կաթողիկոսը, ինչպէս երևում է, ինքը ևս իւր կանոններին մի մշտական, մշակուած կանոնադրութեան նշանակութիւն չէ տուել, որովհետև ուղղակի իրաւունք է տուել հոգաբարձութեան կառավարել հասարակութեան գործերը: Ըստ իւրեանց բարեհալեցողութեան, իւր տուած փոքրաթիւ կանոնները պահպանելով միայն իբրեւ հիմք, իբրեւ ընդհանուր ուղղութիւն առաջադրող նախաշաւիղ: Այս առթիւ նա իւր կոնդակի վերջում իւր օրհնութիւնը ժողովրդին տալուց ու մեր սուրբ հօր Գրիգոր լուսաւորչի օրհնութիւնը հասարակութեան ղեկա-

վարձերի վերաջ կոչելուց լետուլ, ասում է. «վերջապէս այս ու
քանի մի գլուխ հայրական խրատիւք կարէք և զայլս գլխել
զկամա Աստուծոյ, և զհաճութիւն մեր առ բարեկարգութիւն
քաղաքին ձերոյ»: Նոր կանոնները պարունակող կոնդակը
հրատարակելուց լետուլ, կաթողիկոսն իսկոյն և եթ հրամալում
է հասարակութեան հոգաբարձուների ընտրութիւնը կատարել,
երևի, մտածելով, որ եթէ ընտրութիւնները կատարուեն իւր
ներկայութեամբ իւր վերահասութեան ու հսկողութեան ներքոյ
և հաստատուեն իւր ձեռքով, նոր դրուած կարգ ու կանոնն
աւելի հաստատ, աւելի լարատե կլինի: Մեր ձեռքին դառնում
է Դումի հոգաբարձուների այդ առաջին ընտրութեան թերթն
իւր, երջանկալիչատակ կաթողիկոսի հաստատութեան ինք-
նագիր երկտողով և ընտրողների ստորագրութեամբ: Դա մի
կապտագոյն դրուագաւոր և ևզերքը ոսկեգօծած թերթ է. նո-
րա վերըն գրուած է հոգաբարձուների թուի, ընտրութեան և
հաստատութեան համառօտ լիչատակութիւնը, մէջտեղը—ընտ-
րուածների անունները և վերջը ընտրողների ստորագրութիւ-
նը և կաթողիկոսի հետեւալ երկտող հաստատութիւնը՝ «ընտ-
րութիւն երեսուն և վեց հոգաբարձուացս Նախիջևանու և ես
հաճեցաւ Օրհնութեամբն Աստուծոյ և սուրբ Լուսաւորչին հաս-
տատեմ զսոսա մնալ միշտ օրհնութեան աստուծոյ արժանաւոր:
Յովսէփի կաթողիկոս ամենայն հալոց և սրբոյ Աթոռոյն էջ-
միածի»:

Կաթողիկոսի Նախիջևանում արձակած երկու կոնդակն
էլ, որոնք գրուած են Յովսէփի կարճատե կաթողիկոսութեան
ժամանակ արձակուած կոնդակների ընդհանուր ձևով ու ոճով,
այսինքն վերը՝ է, նորա տակը կաթողիկոսական կարմիր
կնիքը և կարմիր թանաքով գրուած «Յիսուսի Քրիստոսի ծա-
ռալ Տէր Յովսէփի կաթողիկոս և ծալրագոյն Պատրիարք հալոց՝
առաքելական եկեղեցւոյն Քրիստոսի, նաև՝ Լուսակերտի սըր-
քոյ Աթոռոյն էջմիածնի» կաթողիկոսական տիտղոսը, լցուած
են բացի վերոյիշեալ երկու գլխաւոր կարգադրութիւնից, այլ
ևս ուրիշ մանր սիրալիր հոգացողութիւններով գաղթականնե-
րի մասին: Ամեն բանից երևում է, որ հանգուցեալն այդ վեր-
ջին անգամն այցելելով իւր հիմնարկած քաղաքը և պատրաս-
տուելով ընդ միշտ հրաժեշտ տալու իւր սիրեցեալ հօտին, աշ-
խատում է պակաս բան չթողնել: Մինչև անգամ Հայտարարա-
նից, ուր նա ժամանում է սեպտեմբերի 12-ին, նա աչնպիսի

խրատական նամակներ ու թղթեր է ուղարկում Նախիջևանց-
 ւոց, որոնք ցոյց են տալիս, որ նորա ուշն ու միտքը լետ է
 մնացել, որ նորան դժուար է բաժանուել նոցանից։ Նամանա-
 ւանդ նշանաւոր են նորա Հաշտարխանից Նախիջևանի քա-
 ղաքադէսին ուղարկած երկու կոնդակները, որոնցից մէկն ար-
 ձակուած է 1800 թուի Հոկտեմբերի 17-ին, միւսը — 1800 թուի
 նոյեմբերի 15-ին։ Առաջինի մէջ կաթուղիկոսը նկատելով, որ
 մի առանձին հարկաւոր բան չունի գրելու, որովհետեւ բոլոր
 անհրաժեշտ բաներն արդէն գրել է քաղաքադէսին հասարա-
 կաց կոնդակում, ասում է, թէ ինքը պատրաստուած է ճանա-
 պար ընկնել դէպի ս. Էջմիածին, միայն օրէցօր սպասում է
 կալսերական հրովարտակին, և զարմանում է, որ մինչև այդ
 ժամանակը դեռ չէ ժամանել Հաշտարխան Նախիջևանի լաշորդ
 կարապետ վարդապետը, որին նա միտք ունի իրանից առաջ
 ս. Աթոռ ուղարկել։ Յալտնում է նոյնպէս և ալն աղէտների
 ու տառապանքների մասին, որ այդ ժամանակները Ս. Էջմիա-
 ծինը և նորա միաբանները կրել էին թշնամիների երեսից, և
 ցաւակցական ձեռք ասում է, թէ ինքը չէ հասկանում կարա-
 պետ վարդապետի ալիքան ուշանալու պատճառը, որովհետեւ
 եթէ նա շուտով եկած ու ճանապարհ ընկած լինէր դէպի ս.
 Էջմիածին, մեծ օգուտ կ'լինէր ողորմելի միաբաններին, որոնք
 ժամէ 'ի ժամ սպասում են կաթուղիկոսի գալուն։ Աւ, վերջա-
 պէս, պատմում է ալն հանդիսի մասին, որ ինքը կատարել է
 Հաշտարխանում ալնտեղի հալոց մալր եկեղեցում հաշտարխան-
 ցւոց ստացած արտօնութիւնների պատճառով։ Վասնու 7. մեծ
 հանդէս արարաք, ասում է նա, վասն պրովելեկին Հաշտար-
 խանու 'ի նորաչէն աւագ եկեղեցին, լորում էին քաղաքապետն,
 երկու 'ի Պետրբորքու եկեալ սէնաթօրքն և ալ մեծամեծ և
 երեւելի անձինք և աստիճանաւորք ռուսաց և խուռն բազմու-
 թիւն մերազնէից. զինի պատարադին և մօլերինին, նոյն հան-
 դիսիւ և նոյն բազմութեամբ լեկեղեցւոյն հանեալ զպրովելեկն
 հոգևոր երգօք շարականաց, զանգակահարութեամբ, լուցեալ
 Լապտերօք, խաչուարօք և պատկերօք, հանդերձ զգետաւորեալ
 եկեղեցական խմբիւք, տարաք 'ի հալոց մարմնաւոր կառա-
 վարութիւն, և օրհնեալ զդատաստանատունս նոցա հոգևոր
 օրհնութեամբ և լանձնեալ զպրովելեկն դատաւորացն հանդերձ
 խրատական և լորդորական բանիւք, բազմեցաք 'ի ճաշել անդ
 'ի մէջ դատաստանատան, որք էին թուով աւելի քան զեօթա-

նասունն: լերեկոյին ևս՝ մինչև լառաւօտ զբոլոր զիշերն լեմանացի արարաք և ալսպիսի հոգևոր և մարմնաւոր ուրախութեամբ՝ զտիւն զողջոյն և զգիշերն զողջոյն անցուցաք, խնդրելով զկեանս վասն օծելոյն Աստուծոյ Օգոստափառ Կալսերն մեծի: որպէս զայստսիկ զամենայն երկաթորէն և լիակատար ՚ի կազէթին ունիք տեսանել և ընդ մեզ ուրախակից լինել: Գերազնիւ աղալ Յոհաննէսն ամենաբարեպաշտ իշխանն ևս՝ ՚ի մէջ եկեղեցւոյն առաջի ամենայն բազմութեան խոստացաւ:

23) Դնում ենք այստեղ նոր կանոնների հիման վերալ կատարուած ալքառաջին հոգարարական ընտրութեան թերթի պատկերը: Թիւ Մերս Նախիջևանու հոգաբարձուացն, որք ընտրեցան հասարակութեամբ մերով, երդուեցուցմամբ՝ սուրբ Խաչիւ և Աւետարանաւ, սակա աննեմդ սիրով լինելոյ առ իրեարս և խորհելոյ զօգուտս և զչահաւէտութիւնս քաղաքի և հասարակութեան մերոյ: որք և հաստատեցան երկոցս երանեալ և Աստուածաբնտիր Քահանայապետիւ ամենայն Աղգիս Հալոց: Յամի տեսան 1800, և սեպտեմբերի մուտն:

ԱՍՏԻՃԱՆԱՌՐԻ:

Պարոն ռօտմէսդր մահտեսի Աստուածատուր Ղաղարեան:
 Պարոն քապիտան Ստեփան Չալքիսուշեան:
 Պարոն պառուտչիկ Մկրտիչ Պետրոսեան:
 Պարոն պառուտչիկ Ստեփան Տէր Ոսկանեան:
 Պարոն պառուտչիկ Դանիէլ Ղարաղաշեան:
 Պարոն պօտ պառուտչիկ Յակոբ Կիւզէլեան:
 Պարոն պռապօրչիկ Մանուէլ Շահինեանց:

ԿՈՒԱԺՏԱՆՔ:

Պարոն Գլաւալ Կարապետ Յովանէսով:
 Պարոն առաջին դատաւոր Գէորգ Մարգարով:
 Պարոն երկրորդ դատաւոր Լուսեղէն Գալուստով:
 Պարոն երկրորդ դատաւոր մահտեսի Յարութիւն Ղաթրանով:
 Պարոն երկրորդ դատաւոր մահտեսի Ալտին Ասվատուրով:
 Պարոն երկրորդ դատաւոր Զօրալ Սահակ Պետրոսով:
 Պարոն Յարութիւն Տէր Մկրտիչով:
 Պարոն Մանուկ Սահակով:
 Պարոն Թումաս Խօճախեան:
 Պարոն մահտեսի Խաչիւրեա Հալլաճեանց:
 Պարոն Գասպար Սահաթճիեանց:
 Պարոն Գասպար Սալթիկեանց:
 Պարոն Սարգիս Մեսնիքեանց:
 Պարոն Նիկողոս մահտեսի Գաբրելեանց:
 Պարոն Կարապետ Նախաշեանց:
 Պարոն Մկրտիչ Ասվատուրեանց:

որպէս մէկ հազար թուման Հաշտարխանու հալ աղքատաց, և մէկ հազար թուման ձերդ հասարակ ժողովրդոց և աղքատաց, և մէկ հազար թուման ևս գրիգորուպօլցւոց որպէս զալս ևս ունիք տեսանել 'ի կազմին: շատ բարւոք լինի հասարա-

Պարոն Ալտին Պարոնեանց,
 Պարոն մահտեսի Նազարէթ Ախաշեանց,
 Պարոն Յովանէս Տալանալըեանց,
 Պարոն մահտեսի Գէորգ Շախարեանց,
 Պարոն մահտեսի Մանուկ Թուֆլիքեանց,
 Պարոն Գէորգ Շլթեանց,
 Պարոն Խաչատուր Կօկօեանց,
 Պարոն տիրացու Երեմեայ Գասպարեանց,
 Պարոն Մելքոն Ղարապուցի Յովակէմեանց,
 Պարոն խազաղ Պետրոս Յովանէսեանց,
 Պարոն Յովակէմ Ալանալեանց,
 Պարոն Կալապետ Չաւրխանեանց,
 Պարոն Յովանէս Ալիկ օղլի:

Ընտրութիւն երեսուն և վեց հոգաբարձուաց Նախիջեանու և ես հանեցաւ: Օրհնութեամբն Աստուծոյ և սուրբ լուսաւորչին հաստատեմ զսոսա մնալ միշտ օրհնութեան Աստուծոյ արժանաւոր: Յովսէփ կաթողիկոս ամենայն հալոց և սրբոյ Աթուռն Էջմիածնի: Մեք ներքոյ ձեռագրեալքս հալոց Նախիջեանու հասարակ անձինքս, որ վերոյ գրեալ ի հասարակութենէ մերմէ ընտրեցեալ երեսունը վեց մարդիքն վասն հասարակութեանս մերում հոգաբարձու կարեցեցեալ եղին: Մեք ևս հանձնեցեալ ընդունեցաք: Որ անա ձեռագրեցաք: Գաղաքացիքս:

Մահտեսի Սարգիս մահտեսի Զոխարով
 Մահտեսի Յակոբ Արութինով
 Մահտեսի Պետրոս Պապասինով
 Մահտեսի Խաչիկուռուզ Մարտիրոսով
 Գաբրիէլ Տէր Գրիգորով
 Լուսեղէն Նազարէթով
 Մահտեսի Գաբրիէլ Ողաուբով
 Մահտեսի Օվանէս Մարգարով
 Թիքիճի Խաչիկ Պետրոսով
 Պաղղասար Տէկերմէնճով
 Վարդերես Խաչատուրով
 Նիկողոս Մսօրով
 Քիստոստուր Պէտրոսով
 Պոլղոս Պէտրոսով
 Լուսեղէն Եղիեալով
 Խաչախազար Մանուկով
 Գէորգ Սակարով

կութեանդ զթուղթ շնորհակալութեան գրել նմա, զի կրկին հաստատուն լինիցի բանն, և լուսամ, որ լալս նուազ ճշմարիտ լինելոց է առանց կարծեաց»:

Երկրորդ կոնդակում լայտնելով, որ Կարապետ վարդապետին արդէն նոյնմբերի 7-ին ճանապարհ է ձգել դէպի Ս. Էջմիածին, ինքն էլ պատրաստում է Հաշտարխանից դուրս գալ մինչև նոյն ամսի 22-ը, ասում է, թէ ինքը պէտք է անցնի Ղալարի և Մոզդուկի վերալով ուստի և խնդրում է, որ քաղաքագլուխը բոլոր Նախիջևանի «մեծահաւատ» ուխտաւորներին, որոնք ցանկանում են իրան տեսնել, պատուիրէ Մոզդուկ գալ և իւրեանց հետ բերել «ղուռուշ» և չալթմիշլուխ» կոչուած օսմանցւոյ՝ փողը. ինքը պատրաստ է ալդ փողի փոխարէն հատուցանել նոցա ռսկի կամ արծաթ, որովհետեւ, միաբանների գրածին հաւելով, Հայաստանում ալդ ժամանակները միայն ալդ փողերն են գործածւում:

Հաշտարխանից ուղարկուած երկու կոնդակը, որքան

Պաղտասար Սրապետնով

Օվանէս Կիրակոսով

Մեկըրտիչ Օվանէսով

Պարօն Թօրօսով

Ըստեփան Էլվաղեանց

Մահտեսի Խաչերես Ծառուկովս գիր չէլի խապար խընդրեցի մահտեսի Խաչկուռուղիցն որ Հալ իմ տեղս ձեռագրեաց:

Մահտեսի Խաչերես Ծառուկով:

Մկրտիչ Նազիրով

Շահէն Պարօնով

Սարգիս Բարսատանով

Մահտեսի Ասվատուր Պետրոսով

Մինաս Պապիկով

Մեկըրտիչ Ճանիկով

Պետրոս Պաղտասարով պախալ

Քրիստոստուր Պէտրոսով

Մահտէսի Օվանէս մահտէսի Ասվատուր

Սահակէմ Օվակէմով

Կարապետ Կասպարով

Սիմաւօն Թօբալ Օդուման

Արլութիւն Սարգիսով

Միքայէլ Քիրքորով պախալ

Արութուն Աւետիքով

Մահտեսի Մկրտիչ Պետրոսով

մեղ լալտնի է, Յովսէփի նախիջկանցւոց դրած վերջին թղթերն են, ուրեմն և նորա վերջին հաղորդակցութիւնը նոցա հետ ²⁴⁾։ Այնուհետեւ նա, ինչպէս լալտնի է, գնում է Թիֆլիս և դեռ իւր աթոռատեղին չհասած և ս. օծումն չընդունած, մեռնում է, անջնջելի լիշատակ թողնելով աղբի մէջ և մանաւանդ Ռուսաստանի հայոց՝ նախիջկանցւոց, գրիգորուպօլցւոց և հայտարխանցւոց սրտերում ²⁵⁾։

Խաչիկ Միճրանօւլ

Մահտեսի Սրապիօն Մանուկօւլ

²⁴⁾ Մեր ձեռքին գտնուած չորս կոնդակներից երկուսը — Նախիջկանում արձակուածները մեծադիր են, երկուսը — Հայտարխանից ուղարկուածները փոքրադիր են։ Նախիջկանում արձակուածները զանազանում են Հայտարխանում գրածներից, բացի իւրեանց դրքի մեծութիւնից, և իւրեանց կնքի մեծութեամբ սւ ձևով։ Մեծերի կաթուղիկոսական կարմիր կնիքները մեծ են և կլորակ ձև ունին, իսկ փոքրներինը փոքր են և քառակուսի։ Մեծ կլորակ կնիքների վերաջ նկարուած է Քրիստոսը, մի ձեռքին խաչազարդ գունդ բռնած, միւս ձեռքը բարձրացրած օրհնութիւն տալու ձևով, փոքր կնիքները անպատկեր են։ Սեծ կնիքների չորս կողմը գրուած է՝ «Ննորհին Աստուծոյ Տէր Յովսէփ կաթողիկոս ամենալն Հայոց ՌՄԽԹ», իսկ փոքր կնիքների վրայ գրուած է՝ «Յովսէփ կաթողիկոս Ռ.Մ.Խ.Թ.։ Երկու տեսակ կոնդակներումն էլ արժանի է ուշադրութեան կաթուղիկոս բառի գրութեան ձևը կաթուղիկոսական տիտղոսի մէջ։ Գրուած է «թուղ» և վրան նկարուած է մի խաչազարդ կաթուղիկէ, որի երկու ծալրերը վար իջնելով, ներփակում են իւրեանց մէջ ալդ բառը և կազմում են նորա երկու կողմում «կ» տառը։

²⁵⁾ Երջանկալիշատակ կաթուղիկոսն իւր քաղցր բնաւորութեամբ և խոհեմ վարեցողութեամբ անջնջելի լիշատակ է թողնում ոչ միայն Հայերի սրտերում, այլ և ռուս մեծաւորների և մինչև իսկ ռուս բարձր հոգևորականների սրտերում։ Աւելորդ չենք համարում դնել այստեղ, քաղելով ձեռագիր «Դաւթարից», հանգուցեալի կոմս Ռումեանցովին և Կիւելի Պեչերսկի վանքին արած ալցելութեան հեռաքրքրական նկարագրութիւնը, որից երևում է այն մեն լարդաւքն ու պատիւը որ ցոյց էին տալիս նորան ռուս իշխանաւորները և հոգևորականները։ «Ի սոյն թուղջ (1781) և ի լունիսի 12 ելեալ ի Կատարինէսլաւէ դէպ ի Մօսկով ի ճանապարհին հանդիպեցաք ի Բօլթաւ քաղաքն առ արք եպիսկոպոսն Նիկիփոր որ էր Առաջնորդ Քերսօնու և նոր ռուսաց, իջաք ի վանսն, պահեաց զմեղ երկու օր և եցոյց զբաղում մարդասիրութիւնս։ Եւ անտի գնացաք առ զաաք Պետր Ալեքսանդր Ռումեանցով

Ֆերթմաշալն ի գիւղն իւր վինչիկալ, որում եղև լուրախութիւն լոյժ, իշոց զմեզ ի վրանի զեղեցկագունի, զոր լսամանցուցն էր գերեալ պահեաց զմեզ չորս օր՝ և լամենայն աւուր՝ առաւօտ և երեկոյի առ միւզ գալր և զմեզ առեալ տանէր առ ինքն ի ճաշել, և շրջեցոյց զմեզ լամենայն ուրեք մեծադոյն պատուով: Զգեստն մեր եպիսկոպոսական՝ ետես և հաւանեցաւ: Եւ լետ բազում մարդասիրական պատուոյն, կամեցաւ առաքել զմեզ ի քիով քաղաքն լորում են բաղում վանօրալք և տեղիք սրբոց, որք են հիմն հաւատոյ ռուսաց բոլոր երկրին, զի նախապէս անտի են հաւատացեալ ի Քրիստոս Փրկիչն մեր: Եւ մեք ըստ բանի նորա լանձն առաք զնալ և տեսանել զսուրբ վայրսն: Գրեաց զիր լանձնարարական առ սրբազան Գաբրիէլ մետրապօլիտն ծերունի, առ արքիմանդրիտն զոսիմէ, և առ կամենդանթն իւրան Ստէփանիչ Կուկիսովն, ընկալնուլ զմեզ և պատիւ ցուցանել:

Յուլիսի 24, օրն հինգշաբթի մտաք ի քիով, իջաք ի տան վերոյ կասեղանթին, մերձ ի Պէչէլսկի վանքն, լորում Արքիմանդրիտն զոսիմէ նստէր, իմացեալ սոյնոյ Արքիմանդրիտիս, իսկոյն եկն առ մեզ ի տեսութիւն քանի Աբեղայիւք, զմեզ առեալ տարաւ առ ինքն ի վանք Պէչէլսկի սուրբ Աստուածածին կոչեցեալ, և շրջեցոյց ի լեկեղեցին և ի զգեստատունն: Եկեղեցիքն էին լոյժ գեղեցիկք բոլոր նկարեալ պատկերօք տնօրինականօք՝ ի ներքին լորմէն սկսեալ, մինչև դմլակէտ կաթուղիկէին, ոսկէտուպ խաչկալիւք և արծաթեալ սեղանօք: Եւ սեղանն զարդարեալ մեծամեծ ոսկեալ և արծաթեալ խաչիւք և պատկերօք: Եւ ի նմին եկեղեցւոյն զոր բազում անօթ ոսկեղէն սկիհք քանդակելագործ. մարգարտեալ և ականակուռ սաղավարտք խաչիւք: Պնակէք և խաչք պարանոցի բազում, բոլորն ոսկի և ականակուռ: Շուրջառք գեղեցիկք և մարգարտեալք ելուղեալք ակամքք պատուականօք: Յետ տեսութեան զգեստուցն տարան զմեզ ի Պէչէլսկի, ալսինքն ի ներքոյ գետնոյ շինեցեալ երկար շէնսն որ է ի ներքոյ վանիցն, լորում են ամենայն սուրբքն իւրեանց և նախնի հարքն և ի Քրիստոս ծնողքն ի մէջ դադաղի եղեալ առողջ իւրեանց հանդերձիւքն և զգեստիւք, թէ եպիսկոպոս է թէ վարդապետ և թէ ալլ աստիճանաւոր, թուով մինչ ԿՂ, որք առողջք են և անապական և զարմանալի տեսողաց ի նմին գետնափորի, գոն և երեք եկեղեցիք, լորս զաստուածալին պատարաք մատուցանէին:

Եւ անտի ի տպագրատունն տարան և լալլ ուրեք եկեղեցեաց շէնքն և նամանաւանդ մուտն վանիցն էր գեղեցիկ: Ընդ սրբազան Արքիմանդրիտին զոսիմէի և ընդ հասարակ միաբանիցն, բազմեցաք ի սեղան ի ճաշել հասարակութեամբ լետ սաղմոսասելոյն, զմեզ հրաւիրեցին ի լորհնել, սկիզբն և վերջն, և ոմն ի լամբիոնի ընթեռնոր զճառ ինչ: Արծաթեալ

գեղեցկաշէն և լոյժ մեծ ըմպանակ ինչ գոյր ի մէջ սեղանոյն լի ջրով. լետ հացին ամենեքեան մասնաւորեցան ի նմանէ։ Եւ ի մէջ եկեղեցւոյն ի վերայ սեղանոյն Աթոռ զնէին միշտ որ ի ժամ նստման, նստցուք, Բաղմադիմի ցուղեալ մեզ զմարդասիրութիւն երանելի Արքիմանդրիտն, չորս անգամ ընդ նմա ճաշեցք և շնորհնաց մեզ զուսերին բազում գրեանս, և զրազում թոշակս ճանապարհի հացք և ըմպելիք։ Եւ հաշնապազ օր վեց ձիով կառելին ի դրունս մեր կալր, ընդ ուրումն երամանախ, ալսինքն կրօնաւոր քտհանալի, որոյ անունն կոչիւր Օրինջի կամ Գիօրկի, զոր մեզ վերակացու էին կարգեալ։ Երկու անգամ և սրբաանն Վաքրիէլ մետրապօլիտն հարկաւորեաց զմեզ ի ճաշ ի վանս սրբոյն Սոփիալի և նա բաղմադիմի պատիւն և սէրս եցոյց, և մանաւանդ առ սուրբ հաւատս մեր, որ զդանձ արամեանն (°) ունելով ի ձեռին, գովէր ի մէջ հրապարակին, լորում էին հոգեւորականքն և երեւելի աշխարհականք թէ՛ ճշմարիտ և ուղղափառ հաւատ է Հայոց հաւատն և ալլ ալսպիսի բանս համարձակօրէն և սա ընկալեալ զմեզ ի սեղանն սուրբ, և լետ արձակման սրբոյ պատարագին, զնշխարս տալին մեզ և զդինի։ Եւ լեւանելն մեր ի յեկեղեցւոյն խառնիճաղանջ ամբողջն անկեալ ի վերայ մեր, ամենեքեան ալ առեալ զօրհնութիւն խնդրէին։ Օր մի ևս առ կամենդաթն, ճաշեցաք. եղաք մեք անդ աւուրս եօթն։ Եւ շրջեցաք ընդ ամենայն վանօրայուն ի րարաթսկի մանաստէրն, լորում էր դպրոցն մեծաշէն, որոյ Արքիմանդրիտ և վարդապետ էր Կասիան։ Ի Պետրովսկի Մանաստէրն, լորում էր կառավարիչ Երօնիա իգումէնն։ Ի Միխայելովսկի մանաստիւրն, լորում գոյր սուրբ Վարվառեալ կուսի բոլոր մարմինն, ի միջակետին ի մէջ դադաղի եղեալ և ի վերայ նորա ոսկէ տուպ խորան կանգնեալ, չորիւք սեամբ, զորոյ ձեռանէն խաչալուալ արարաք մեք մերով ձեռամբ և քսեցաք խաչս մեր և ամենայն բաղմութիւն, որ անդ։ Որոյ Արքիմանդրիտ է Տարասեա Պեչերսկի Նամեսնիկ անունն էր։ Ի Վրդուբովսկի մանաստիւրն, որոյ դրութիւնն է լոյժ գեղեցիկ ի վերայ ձորոյ Արքիմանդրիտն նորին Մելքիսէթ, որ տեղապահ է մետրապօլիտն։ Նիկոլսկի մանաստիւրն և կանանց երկու անապատն և լալլ ուրեքս և ալլն։

ՅՐՈՒԱՆԴ ՇԱՀԱՋԻՋ